№ 275 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 № 275

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., ճօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Ցայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԴԵՐԱՍԱՆ

ԳԷՈՐԳ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

մահվան քառասունքին, կիրակի, դեկտեմբերի 17-ին, ժամը 12-ին, պատարագից յետոյ, Մոդնու ս. Գէորգ եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին յայտնում է Սաթենիկ Պետրոսեանը իր զաւակներով։ (շ. կ.) 1—2

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ!!

Շուտով կը հրատարակվին ընտրողների ցուցակները Պետական Դումայի համար։ Ամեն մի անձն, ով ընտրութեան իրաւունք և ցնդ ունի, պէտք է հետաքրքրուի լինէ իմանալու համար, արդեօք մտցրված է իր անունը ցուցակների մէջ և եթէ չէ մտցրած, աշխատէ ուղղել տալ սխալը և մտցնել տալ իր անունը, որ չը զրկվի ձայն տալու իրաւունքից պատուիրակների ընտրութեան ժամանակ։ Ցուցակների հրատարակութեան օրից 2 շաբաթ ժամանակամիջոց է տրվում յայտարարութիւն տալու համար, որ սխալն ուղղեն։ ա. օ. մ. 5—10

Արտիստիկ Ընկերութեան Թատրոն

Երկուշաբթի, դեկտեմբերի 18-ին

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ

Մ. ԱՂԱՅԵԱՆԻ բենեֆիսին

կը ներկայացնէ

ՄՐՏԱԻԱԶԴ II

Պատմական փէերիա 3 արար., Յ. Թումանեանի Մասնակցում է երգեցիկ խումբը։ Երաժշտութիւն և դեկավարութիւն Թելիշեանի

ԱՆՆԱ ԴԷ ԿԵՐՎԻԼԼԵՐ

Ողբերգութիւն 1 արար., Լէգուվէի, թարգ. Մ. Մանուչարի

Սկիզբը երեկոյեան ժամը հինգ 8-ին է։

Տեղերի գները բենեֆիսի են։

Վարչութեան հերթապահ անդամ՝ Յ. Ղորղանեան

Բժիշկ՝ Յ. Աբէլեան

առ. շ. կ. 1—2

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓԻՐԻՉ“

իմաստ, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հոյս տեսաւ.

V-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սեր. Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչ» I պրէմիան։

Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 ռուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 ռուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. Ц. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓԻՐԻՉ»-Ի խմբագրութիւն

ե. շ. առ. 18—25

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԷՏ

ներքին և վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակի, Սերգիևսկայա 15, Քրիստոֆորի տանը։

առ. (չ.ու.շ.) 21—100

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԲԻՆՈՎ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԲՈՎՈՎԿ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԷՎՈՎԿ.—Ականջի, քթի և բերանի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.

Բժ. Վ. Վ. ԶԼՈՒԿՈՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՈՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. ուրբ. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԳՈՎԼՈՎԿ.—Ներքին հիվանդով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 1—2 ժ. երեքշ., չորեքշ., շաբ., կիրակի, կանայք երկուշաբթի, հինգշ., 1—2 ժ., ուրբ. 12—1 ժ.։

Բժ. Ա. Ա. ՄՕՆԱԼ.—Ներքին, երեխ. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.

Բժ. Ա. Տ. ԲՕԳՄԱԿՈՎԿ.—Երեխ., չորեք., շաբ 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Ն. Ի. ԵՂՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., չոր., կիր. 12—1 ժ., երեք., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՈՐՈՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԿՆՈՎՍԿԻ }

Բժ. Գ. Ի. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. դեղեր. մասաժ, երեքար. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՅՈՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Մ. ԵՒ. ՊԱՒԼՈՅԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 11—1 ժ. երկ., երեք., չորեք., ուրբ., կանանց 1—2 ժ. հինգշ., շաբաթ., կիրակի։

Բժշկական խորհուրդներ, մասաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիվանդել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 24—144

ԿՈՉ

Ղարաբաղի սովեալների օգտին դեկտեմբերի 26-ին տրվելիք երեկոյթի նախաձեռնողները խնդրում են հասարակութեանը և խանութատէրերին, որ չը զլանան նուիրաբերելու նոյն երեկոյթում սարքվելիք վիճակախաղի համար զանազան ձեռագործներ և այլն։ Նուիրաբերողների անունները և ամբողջ հաշիւը կը տպագրվի. նուէրները ընդունվում են բժ. Մ. Մուրադեանի մօտ, Սօլոլակ, Բարիշևսկի փողոց տ. № 1, Ե. Ծատուրեանի խանութում, Դվորցօվայա փողոցում, պ. Ս. Եղիազարեանի մօտ, Վելիկօկնեժէսկայա տ. № 34 և Գ. Զիլինգարեանի խանութում, Արմենանկի բազար։ 1—1

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆոն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻԱՁԻՆ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—Ջղային, ներքին հ. և էլեքտրօբուժութիւն։

Դ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ս. Ա. ԼԻՒԻՆ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ։

Մ. Գ. ԿԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Ա. Ա. ԲԼԵՑԻ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՐՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկումն հիմնօղով, կատարվում են միկրոսկոպիական, բակտէրիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմբյունների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։

(օ. մ.) առ. ե. հ. կ. 1—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զրկվածների համար. Վերջին տեղեկութիւններ. Օրվայ պահանջ. Ա. Սեդրակեանի յիշատակին. Ազգ. եկեղեցական հարցը և ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը. Մասուլ. Մի ձեռնարկութիւն. Հայեր և օսմանեան կառավարութիւն. Շուշա իրականութիւնից. Աբովեանի ծննդեան առիթով. Ընտրութիւնների շուրջը. Թիֆլիսի արքունական թատրոնի բէմիսը Կարգարեանը վիրաւորվելը. Ախալքալաքցու մտաւոր և բարոյական կողմեր. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Փարսպայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԶՐԿՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

I

Մենք մի պարտաւորութիւն ունենք դէպի ձեռնվայ զրկվածները։ Ամեն օր բազմաթիւ կարօտեալներ և չքաւորներ դիմում են մեզ, խնդրելով նպաստներ թէ ցրտից պատսպարվելու, թէ հիւանդներին խնամելու և թէ իրանց ամենօրեայ կարիքները հոգալու։

Մեղմները դիմում են զանազան բարեգործական հաստատութիւններին և խմբագրութիւններին, յուսալով մի որևէ տեղից գտնել օգնութիւն։

Մենք իւրաքանչիւր տարի կարողացել ենք մի որոշ աստիճան օգնութիւն հասցնելու խեղճերին, տալով նրանց՝ ոտներին փոքրիկ նպաստներ։

Որքան էլ չնչին են եղել այդ նպաստները, այնուամենայնիւ նրանք որոշ դեր կատարել են և կարողացել են կարօտութեան սուր արտայայտութիւնը մի փոքր մեղմացնել։

II

Այս տարի կարօտեալների թիւը աւելի մեծ է, քան նախորդ տարիներում Երկրի քայքայված և անապատով վիճակը քաղաք է գցել բազմաթիւ մարդկանց, որոնք առաջվայ ժամանակները ամենևին կարօտեալի դրութեան մէջ չեն եղել, այլ և իրանք են օգնել ուրիշներին։ Այժմ դժբաղդութիւնները և աղէտները մուրացկան են շինել շատ նախկին բաղդաւորների։

Եւ մենք, որ անձամբ լսում ենք նրանց գանգատները, գիտենք թէ ինչ դժուարութեամբ են նրանք ձեռք կարկառում դէպի ուրիշները օգնութիւն խնդրելու։ Դրանք ժամանակաւոր կարօտեալներ են, որոնք աշխատում են մի կերպ գլուխ պահել անցողական շրջում, մինչև որ կարողանան նորից ոտքի կանգնել և իրանց տնտեսութիւնը վերակազմել։

III

Թէ բարեգործական հաստատութիւնները և թէ խմբագրութիւնները կարող էին միջնորդ հանդիսանալ հասարակութեան և այդ թշուառների միջև, օժանդակել անհրաժեշտ կարիքների մէջ թաղված խեղճերին և մեղմացնել այն տանջանքը և զրկանքը, որ հալումաշ է արել մարդկանց։

Օգնութեան գործը պէտք է միշտ էլ իր դերի մէջ լինի և զանազան կարօտեալներին, բայց, դժբաղդաբար, հասարակութիւնը շատ անգամ անտարբեր է մնում դէպի նրանց վիճակը և մոռանում է իր թշուառ եղբայրակիցներին։

Գոնէ այժմ, երբ ձմեռը իր կարիքներով ծանրացել է զրկվածների դրութիւնը, երբ ոտները ուրախութիւններ են խոստանում ապահով ընտանիքներին, յիշեցէք թշուառութեան մատնված մարդկանց և օգնեցէք նրանց։

Մեզ հասած գումարները մենք կը բաժանենք ոտներին։

Ա. Բ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք «Մշակ»-ում հաղորդել ենք արդէն, որ Նօբելի խաղաղութեան մրցանակը այս տարի յատկացված էր Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահ Ռուզվելտին։ Իսկ խիմիայի մրցանակը տրվել է Գաբրիել յայտնի պրոֆեսորներից Անրի Մուասանին, բնագիտութեան մրցանակը՝ Կէմբրիջի համալսարանի պրոֆեսորներից Տօմսընին, բժշկութեան մրցանակը՝ Պավիայի պրոֆեսորներից Գոլջիին և Մադրիդի պրոֆեսորներից Բասօնի Կաղալին, որոնք բնախօսութեան մէջ ժամանակակից մեծագոյն վարպետներն են։ Եւ վերջապէս գրականութեան մրցանակը յատկացված է իտալացի հրաչակաւոր բանաստեղծ Ջօզուէ Կարդուչչիին։

Կարդուչչին, ժամանակակից իտալական գրականութեան մէջ համարեա նոյնքան համբաւ, փառք ունի, որքան դ'Անունցիոն, յայտնի բանաստեղծն ու թատերագիրը։

Կարդուչչին ծնվել է 1836 թ. յուլիսի 27-ին, Վալդիկաստելլայում, և, հետևաբար, ներկայանում է որպէս երիցագոյն անդամը արդի իտալական գրականութեան։ Նա իր առաջին աշխատութիւնը հրատարակել է 1857 թ.։ Յաջողագործ լոյս է ընծայել իր փառքի տիտղոսները՝ «Բարբարոս տարերը»-ը, «Տաղ ձօված Գարիբալդիին»-ը, «Ուղերձը», «Տաղ նուիրված Մարկարիտա Թագուհուն»-ը, «Շեյլիի եղերգը»-ը և այլն։

Գրականութեամբ հետաքրքրվողներից քչերը միայն չեն կարդացած նրա գործերը, նրա ոտանաւորները, որոնք հընչուն, կրքոտ ընարերգութեան հուրն ունեն իրաց մէջ։

Կարդուչչի եղել է ոչ միայն մի մեծ բանաստեղծ, այլև մի մեծ պրոֆեսոր։ Նա համարեա կէս դար դասախօսել է գրականութիւնը Բոլօնիայի (Իտալիա) համալսարանի բեմից, ուր դիմել են, նրան լսելու համար, Իտալիայի բոլոր կողմերից։ Կարդուչչիի դասախօսութեան գլխաւոր առարկաներն են եղել իտալական գրականութեան հարները, Պետրարկա, Դանտէ, Բոկաչչիօ, Արիոստօ և նրանց գործերը։ Բոլոր նրանք, որոնք գործում են այսօր իտալական գրականութեան մէջ, Կարդուչչիի աշակերտներն են եղել։ Նրա աշակերտն է յայտնի պատմագիր Գուլիելմօ Ֆերրերօն, որ հետևեալ կերպով է բնորոշում իր վարպետին։

«Ես եղել եմ Կարդուչչիի նախասիրած աշակերտներից մէկը։ Բայց մենք բաժանված ենք սիմպաթիայից զրկած մի տեսակ անհամաձայնութեամբ։ Ջօզուէ Կարդուչչի ամեն բանից առաջ մի ազգային հեղինակ է, աւելի շուտ, ազգային ակն, նայիսնալիստ հեղինակ։ Նա այսպէս է համոզված, որ իտալական գրականութիւնն արդէն այնքան հարուստ, այնքան ճոխ է, որ կարիք չունի օտար ազդեցութիւնի ապրելու և աւելի ճոխանալու, փայլելու համար։ «Եթէ կամենում էք մեր գրականութեան մէջ մի արտայայտիչ դէմք լինել, ասում էր նա, պէտք է ներշնչվիք այն հիանալի, հանճարեղ մարդկանցից, որոնք կոչվում են Տասաս, Դանտէ կամ Մաքիավէլլի։ Նրանք գեղեցիկ տիպարներ են, կարիք չունեք օտարներից։ Ես զգնում եմ նրա այս տեսութիւնը փոքր ինչ սխալ։ Ընդհակառակը, ես այնպէս եմ համոզված, որ օտար երկրների գրական ու գեղարուեստական գործերի հետ ծանօթութիւնը անհրաժեշտ է, և մեծապէս նպաստում է մի հեղինակի մտաւոր կազմութեան։ Անենք, անվիճելի է այն փաստը, որ հէնց ինքը Կարդուչչին իր լաւագոյն աշխատութիւնները արտադրեց իր երկրորդ շրջանին, երբ կարդացել էր Վիկտոր Հիւգոյի գործերը և բաց էր արել Հայնէի գրքերը։ Այս երկու հանճարների հետ շփումը ոգևորել, արծարծել էր նրա տաղանդի կրակը։ Կարդուչչի կրել էր անդգալաբար օտարի ազդեցութիւնը։ Ահա այս թեթև անհամաձայնութիւնն է, որ մեզ բաժանում է միմեանցից։ Բայց դա չէ արգելում ամենևին, որ ես հիանամ, խորապէս հիանամ Կարդուչչիի տաղանդի վրա, Կարդուչչիի, որ իմ վարպետը եղաւ և պահպանեմ դէպի նա ամենամակրական և երախտագէտ յիշատակը։ Ուրեմն, աւելորդ է ասել, որ ես երկու ձեռքով ծափահարում եմ, ծափահարում եմ անկեղծօրէն ու խանդաղատագին, այն պատիւը, որ ընծայվեց ժամանակակից Իտալիայի ամենանշանաւոր զաւակներից մէկին»։

—

Պետերբուրգ, 14 դեկտեմ.։ Թիֆլիսի դատաստանական պալատի գլխաւոր նախագահ Զաւադսկին արձակվելով գրաւած պաշտօնից—Նշանակված է ներկայ լինել սենատի քաղաքացիական վճռաբեկ ատեանում։

(«Հ. Գ.»)

ՕՐՎԱՑ ՊԱՀԱՆՋԸ

I

Քաղաքական ներկայ մօմենտում Ռուսաստանի ամեն մի հպատակ, քաղաքացի թէ գիւղացի, աշխատաւոր թէ բուրժուա, մի իդէա է միայն փափայում՝ ազատվել բիւրօկրատական բեժիմի կապանքներից, պետական ներկայ աբսօլիւտիզմից։

Դա է օրվայ չարիքը և այդ էլ պէտք է լինի մարտական նշանաբանը ազատագրութեան կարօտ տարրերի համար։

Բանի այդ բեժիմը դեռ գերիշխում է, խեղդում ու ճնշում մեզ, չէ կարելի յուսալ, որ մեր ամենատարրական ցանկութիւնները—մարդավայել կեանքով ապրելու փափագը, իրականութիւն կը ստանան։

Մինչև չը բարեփոխվի բիւրօկրատական մեխանիզմը և աբսօլիտիզմի աւերակների վրա չը կառուցվի իսկական սահմանադրական պետական նոր կազմը, անկարելի է վերջացած համարել ներկայ բռնութիւններն ու արհաւիրքները և հիմք դնել քաղաքական ու սոցիալական բարենորոգումներին։

Առանց այդ գրաւականների անհնարին է երկիրը կուլտուրական զարգացման հասցնել, իսկ պետութիւնը՝ հզօրութեան, իր փառքին, որոնք անքաժան կերպով շաղկապված են իրար հետ։

Բաւարարութիւն տալ այդ պահանջներին՝ կարող է միայն ժողովրդի շահերին նախաձախնդիր, բարեհաճ կառավարութիւնը։ Մինչդեռ ներկայ բեժիմի դեկավարների ոյժից վեր է այդ բաներ Նրանք, առանց հասարակական ոյժերի աջակցութեան, չեն կարող մարել բիւրօկրատիզմի թոռած հեղեղը, բուժել բիւրօկրատիայի տուած վէրքերը և ապահովել ժողովրդի բարօրութիւնը։

Զը նայելով դրան՝ բիւրօկրատիան ըմբռնում է արդէն պատմական անհրաժեշտութիւնը, այնուամենայնիւ, հրամայողաբար հնչող օրվայ մարտական նշանաբանի հանդէպ նրա մէջ ըմբոստանում է երակները մտած հազարաւելեան վիշտ բիւրօկրատիզմը։

Դրանով կարելի է բացատրել այն հանդգնաժ քը, որ նոր դիրքերի առաջ նա երերվում է դարձեալ և չը գիտէ թէ ինչպէս վերաբերվի դէպի հասարակական ոյժերի ներկայացուցչութիւնը։

Մեր հասարակական հոգսերից ու մտահոգութիւններից մէկն էլ հէնց այդ հրատապ հարցն է կազմում։

Օրվայ պահանջն է այդ։ Սակայն ո՞վ կարող է իմանալ թէ ի՞նչ կը լինի վաղը։

II

Այլ ևս կասկած չը կայ, որ Դուման գումարվելու է. դա վճռված հարց է։

Այժմ հարց է ծագում, ինչ դիրք կը բռնի կառավարութիւնը Դումայի վերաբերմամբ։

Այդ հարցը, անշուշտ, շատերին է զբաղեցնում, սակայն ոչ ոք չէ կարող դրական պատասխան տալ դրան, չէ կարող բացի հակասական լուրերից նոր բան աւելացնել։

Կառավարչական շրջաններից երբեմն-երբեմն սպառնալիքներ են գալիս. «եթէ այս Դուման էլ համապատասխան չի լինիլ կառավարութեան դիտաւորութիւններին ու ցանկութիւններին, առանց այլևայլութեան կը ցրենք դարձեալ»։

Միևնոյն շրջաններում սակայն պատրաստվում են և ազատամիտ ոգով ներշնչված ծրագրներ, հաշտութեան ու համերաշխ գործունէութեան քարոզներ են խօսում։

Դա ապացոյց է, որ կրամօլան մուտք է գործել և բիւրօկրատիայի շարքերը, որոնցից աշխարհայացքների մէջ ևս ղերտաւորումն է սկսվել։

Բն. կանօրէն, այս վերջին տարիներս փորձութիւնները, այս՝ մի տարվայ անընդհատ խելագար կռիւը զանազան վարիացիաներով, չէ կարող չը համոզել բիւրօկրատիային, որ այդ ստեղծված կուրց դուրս գալու միակ պատուարը և փրկարար ելքը սահմանադրութեան մէջ պէտք է որոնել, և Ռուսաստանը, ներկայ անարխիայից, բարքերի ու կարգերի քայքայումից ազատելու, օրինականութեան հողի վրա դնելու համար, որքան դա շուտ մտցնվի, այնքան քիչ կը լինի կուսը։

Միւս կողմից՝ ազգարնակութեան բոլոր խաւերի շերտաւորումը, քաղաքական կուսակցութիւնների բազմանալը և հզօրանալը, խոստացած «սահմանադրութեան» շուրջը հարձակումները ակներև էր բիւրօկրատական բեժիմի դեկավարների համար Նրանք, փոխանակ զգալու ու ուղղելու սխալը, կօմպրոմիսներ անելու, փորձեցին կանգնեցնել մեծացող հեղեղը։ Կառավարութիւնը արեց այն բոլորը, ինչ որ կարող էր, բայց չը պէտք է անէր։ Նա արհամարհեց ժողովրդական արդար պահանջներն ու իրաւունքները, խեղդից յեղափոխական շարժման բոլոր բռնկումները ցոյց տուեց իր ֆիզիքական ոյժի գերազանցութիւնը ազատական շարժման ոյժերի դէմ, ապտեց իր բոլոր հնարագիտութիւնը և սարսափահար արեց խաղաղ, անպաշտպան ազգաբնակութիւնը։

Բայց և այնպէս հարկադրված էր նահանջել անհրաժեշտութեան առաջ ու ճանաչել նոր Դուման։

Այժմ ժողովուրդն էլ է յոյսը դրել Դումայի վրա, կառավարութիւնն էլ Երկուսն էլ անհրաժեշտ պահանջ են համարում նրա գոյութիւնը։ Առաջինը՝ քաղաքական և սոցիալական ազատ կեանքի գոյութեան համար իրաւական գրաւական, իսկ երկրորդը՝ խռովայոյզ տարրերը խաղաղացնելու և իր գերիշխանութիւնը երկարաձգելու համար մի միջոց։

III

Այնուամենայնիւ Դուման չէ կարող հաշտեցնել այդ երկու տարբեր տեսակէտները։ Նա չէ կարող վերացնել այն մրցութիւնը, որ բնականաբար անջրպետ է կազմում իշխողի և ինքնավարութեան ձգտողների մէջ, ժողովրդական ներկայացուցիչների և միահեծան իշխանութիւնից ձեռք չը քաշող բիւրօկրատիայի միջև։ Սակայն նա կարող է չափաւորել բիւրօկրատական բեժիմի սխորժակը հէնց այժմից և, իբրև սահմանադրական մի մարմին, ետաղ ծառայել ռուսաց հպատակների քաղաքական և սոցիալական իրաւահաւասարութեան հեռաւոր նպատակների համար։

Այդ պատճառով չէ կարող մեզ չը զբաղեցնել այն հարցը թէ ինչ յարաբերութեան մէջ կը լինեն այդ երկու հակառակ բանակները իրար հետ, այսինքն նոր Դուման և բիւրօկրատական ներկայ կառավարութիւնը։

Դժուար չէր լինիլ պատասխանել այդ հարցին, եթէ միայն յայտնի լիներ, թէ ում ձեռքումն է լինելու կառավարութեան դեկը. «Աստղաւոր պալատ»-ո՞ւ իր արքանեակներին, թէ՞ հասարակական վստահելի գործիչների ձեռքում։ Իսկ այդ մեզ յայտնի չէ։

Ցաւմենայն դէպս մերձաւոր ապագան լիքն է անակնկալներով։

Մի կողմից այդ անորոշութիւնը, իսկ մեւ կողմից սպառնալից անակնկալները պէտք է թելադրեն հասարակական ոյժերին համախմբվել Դումայի շուրջը. կազմ ու պատրաստ լինել կառաւարչական դիմադրելու համար։ Մեր ոյժն ու եռանդը պէտք է կենտրոնացած լինի ահա այդ նշանաբանի շուրջը. ձգտենք, աշխատենք, որպէսզի շինարար լինի նրա կազմը, առկուն նրա բնաւորութիւնը և անպայման պրոգրէսսիվ՝ նրա ուղղութիւնը։

Ամեն ճիգ ու ջանք պէտք է գործ դնել, որպէսզի ժողովրդի կամքն ու կարծիքը, նրա բէլ պահանջները արտայայտված լինեն այնտեղ պարզ, ամփոփ և որոշ։

Թող դրանով բէկցիոն բեժիմի շարքերը խառնող տարրերը կրկին անգամ իմանան, որ Դումայի հետ միասին իրանց դէմ կանգնած է ամբողջ ժողովրդի ցանկութիւնը, ամբողջ հասարակական կարծիքը և որ ժողովրդի ու հասարակութեան միացեալ ոյժերը անդրդուելի են իրանց պահանջների մէջ։

Լ. Դանիէլեան

Ա. ՍԵԴՐԱԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքից ստացանք հետեւեալ հեռագիրը։

Ողբում եմ Արտակէս ա՛ռքեպիսկոպոսի և մեր ա՛ժանաւոր եկեղեցականի անփոխարինելի կորուստը։

Արքեպիսկոպոս Դառնակերեանց

Ա Զ Դ

«Երկիր» լրագրի № 60 ի մէջ տպված է Հ. Յ. Դաշնակցութեան կենտրօնական յանձնաժողովի կողմից մի կոչ, որի մէջ յանձնաժողովը, ի մէջի այլոց, յայտարարում է հետևեալը.

«Հ. Յ. Դաշնակցութեան կենտրօնական ընտրողական յանձնաժողովը հարկ է համարում ընդհանուրի ուշադրութիւնը հրաւիրել մի կարևոր հանգամանքի վրա։ Դաշնակցութեան հակառակորդ մշակական-կղերական և այլ տարրերը վերջերումս կազմակերպել են մի խմբակ, որը իրան տուել է «Հայ դեմոկրատական կուսակցութիւն» մեծանշուն անունը։ Այդ խմբակը, իրան նպատակ դնելով ամեն կերպ արգելք հանդիսանալ Հ. Յ. Դաշնակցութեանը առաջիկայ ընտրութիւնների միջոցին, ինչպէս երևում է, գաղտնի համաձայնութիւն է կայացրել Դաշնակցութեան շարքերից դուրս մնացած և ամբողջ ամիսներ խռովութիւններով և խուլիգանութեամբ պարապող «Միհրանական» կոչված տարրերի հետ... Այդպիսի մութ տարրերի վրա յոյս ունի յենվել «Հայ դեմոկրատական» կոչված կուսակցութիւնը և նրանից է նա ակնկալում իր աջողութիւնը... Եւ այդպիսի պայմաններում կարող էք երևակայել, թէ ինչ գին կարող է ունենալ այն դեմոկրատական կուսակցութիւնը, որի հովանաւորները հանդիսանում են այդպիսի մութ տարրեր»։

Թողնելով մի կողմ Դաշն. կենտր. ընտր. յանձնաժողովի անտեղի ակնարկները, չարամիտ ոռնձգութիւնները նորակազմ Հայ Դեմոկրատական կուսակցութեան հասցէին և անարժան համարելով գործ ածել մեր հակառակորդների «զէնքը», Հ. Դեմոկրատական կուսակցութեան կենտրօնական բիւրօն պարտք է համարում յայտարարել ի գիտութիւն հասարակութեան, որ Դաշնակցութեան յանձնաժողովի հաղորդած տեղեկութիւնը հիմնովին սուտ է, զուցէ և դիտաւորեալ։

Հ. Դ. կուսակցութիւնը ունի իր որոշ, դրական սկզբունքները. նրա նպատակը ոչ թէ Դաշնակցութեան հակառակ գործելն է, այլ կազմակերպելը հայ ժողովրդին դեմոկրատիկ սկզբունքներով։ Իսկ եթէ Դաշնակցութիւնը նոր կուսակցութեան գործունէութեան հէնց առաջին քայլերում նկատում է լիքն հակադիր ոյժ, այդ ապրթ է տալիս ենթադրելու, որ Դաշնակցութիւնը կապ չունի դեմոկրատիկ սկզբունքների հետ։ Իսկ եթէ Դաշնակցու-

թիւնը թոյլ է տուել իրան կատարել յարձակումն գիտաւորեալ նպատակով, իբր մի ընտրողական մանեւոլը,—այդ պատիւ չէ բերում իրան զաղափարական անուանող կուսակցութեանը։

Հ. Դ. կուսակցութիւնը գործում է գործելու է բացարձակ, յանուն իր սկզբունքների և դեմոկրատիական (ժողովրդապետական) նպատակների համար։

Ահա այն դիվիզը (նշանաբանը), որով հրապարակ է եկել Հ. Դ. կուսակցութիւնը և որին նա հաւատարիմ կը մնայ միշտ։

Իսկ ինչ վերաբերում է առաջիկայ Պետական Դումայի ընտրութիւններին, Հ. Դ. կուսակցութիւնը արդէն յայտարարել է իր դեկլարացիայի մէջ, որ այդ ընտրութիւններին գործելու է ժողովրդական ազատութեան կուսակցութեան հետ։ Ուրեմն առ այժմ նա ունի միմիայն մէկ կազմակերպված դաշնակից։ Կուսակցութիւնը միևնոյն ժամանակ դիմել է և բոլոր հասարակութեան, բոլոր քաղաքացիներին, որ նրա ծրագրական սկզբունքներին համակրողները յարին իրան, Հ. Դ. կուսակցութեան, հետևապէս և ընտրութիւնների ժամանակ ձայն տան նրա թեկնածուներին։

Հ. Դ. կուսակցութիւնը ոչ բացարձակ և ոչ էլ մանաւանդ զանազան բանակցութիւն չի ունեցել և չունի պ. Միհրանի և նրա խմբի հետ։

Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ նոյնպէս և Միհրանականների կողմից այդ տեսակ դիտաւորութիւն չի նկատված։ Իսկ եթէ պ. Միհրանը կամ նրա համախոհները, իբր անհատներ, իբր սոսկ քաղաքացիներ, ընտրութեան ժամանակ իրանց շրջանում ինքնաբերաբար ազիտացիա կանեն և ձայն կը տան Հ. Դ. կուսակցութեան թեկնածուներին, այդ նրանց քաղաքացիական և արդարացի իրաւունքն է և զուտում-զոյնները այդ առիթով դաշնակցականների կողմից ցոյց կը տան միայն իրանց քաղաքացիական տեսութիւնը։

Հ. Դ. կուսակցութիւնը պատրաստ է կռիվ մղել միայն այն հակառակորդների հետ, որոնք նոյնպէս կանգնած են զաղափարական հողի վրա, իսկ զրպարտութիւնները, հայհոյանքը, տուութիւնը, սանձգութիւնը կը համարի իր արժանապատուութիւնից ստոր և զզվելի գործ։

Հ. Դ. Կուսակց. Կենտր. Բիւրօ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտեում ներկայումս մի յատուկ խորհրդակցութիւն զբաղված է եկեղեցական խնդիրներով, և նպատակ ունի պարզել կուսակցութեան վերաբերմունքը դէպի եկեղեցական կառավարութեան կարևոր հարցերը, որքան որ այդ հարցերը կապ ունեն եկեղեցու և պետութեան փոխադարձ յարաբերութեան հետ։ Այդ ժամանակով կազմի մէջ, կուսակցութեան կենտրոնական կոմիտեի անդամներ իր. Պ. Գօլդօրուկովից, Կոտլարեվսկուց և Նովգորոդցևից բացի, մտել են նոյնպէս Կլիչնիկովն, Բուլգակովը և Մոսկվայի հոգևորականներն մի քանի ուրիշ հեղինակաւոր ներկայացուցիչներ։

Սկզբունքով ընդունելով եկեղեցու ազատութիւնը իր ներքին գործերի կառավարութեան համար եկեղեցական ժողովների ազատ սկզբունքների հիման վրա և անշրաժեշտ համարելով օրէնք-պրօկուրօրի իրաւասութեան մէջ համապատասխան փոփոխութիւն մտցնել,—այնպէս որ նա միայն ներկայացնի կառավարչական մարմինների առաջ եկեղեցու կարիքներն ու շահերը և միևնոյն ժամանակ հսկի եկեղեցական ժողովի օրգանների այն գործողութիւնների օրինականութեան վրա, որոնք անմիջական կապ ունեն պետութեան իրաւասութեան հետ,—խորհրդակցութիւնը առանձին ուշադրութեամբ կանգ է առել եկեղեցական կարիքների համար պետութեան կողմից յատկացվող գումարների վրա, այն պատճառով, որ կուսակցութիւնը անխուսափելի կերպով պէտք է գործ ունենայ այդ հարցի հետ Պետական Դումայում բէմէկն քննելու ժամանակ։ Խորհրդակցութիւնը շօշափել է նոյնպէս և մի շարք ուրիշ հարցեր եկեղեցական կեանքի վերաբերեալ և, ի միջի այլոց, անհրաժեշտ է համարել վերաքննել ժողովրդական ազատութեան կուսակցութեան որոշումը եկեղեցական հոդերի զբաղման հարցի առիթով, ի նկատ առնելով, որ այդ հոդերը ծառայում են զլխաւորապէս եկեղեցական ազգաս ծխի ազատութեան համար, որ չափազանց կարևորութեան մէջ է և անապատով. մանաւանդ որ այդ հոդաբաժինների չափը մեծ մասամբ աւելի էէ այն նորմայից, որից ցածր հոդաբաժինները զբաւական չեն ենթարկվում։ Իր կարծիքը, այդ հարցի մասին, խորհրդակցութիւնը ներկայացնում է ազգարական մասնաժողովին։ Իսկ իր բոլոր վճիռները նախապէս ժողովրդական ազատութեան կուսակցութեան կողմից բաղկացած անձանց աւելի լայն շրջանում, որոնք արդէն ցանկութիւն են յայտնել մասնակցելու եկեղեցական հարցերի մը շուրջն զբաղում,—վերջնականապէս քննելուց յետոյ, խորհրդակցութիւնը մտադիր է ներկայացնել կենտրոնական կոմիտեի և ապա ժողովրդական ազատութեան կուսակցութեան 5-րդ համագումարի քննութեանը։

ՄԱՄՈՒԼ

—

Վրացի պրոֆէսսոր Խախանովը իր մի յօդուածի մէջ Կովկասում գործող կուսակցութիւնների մասին հետևեալ կարծիքն է յայտնում։ Բացի սոցիալ-դեմոկրատներից, ասում է նա, նշանաւոր ազդեցութիւն են վայելում «Դաշնակցութիւն» հայ յեղափոխական կուսակցութիւնը, վրաց «սոցիալ-ֆեդերալիստների» կուսակցութիւնը և թուրքական «Դբֆիյէ» կուսակցութիւնը, որի զլխաւոր նպատակն է պաշտպանել մուսուլմաններին սպառնացող վտանգից։ Համեմատելով երեք տեղական կազմակերպութիւնների ծրագրերը, Խախանովը գտնում է նրանց մէջ մի ընդհանուր կէտ, ուզված այն նպատակին, որ Կովկասեան ազգաբնակութեան բազմացող կազմի մէջ կանոնաւոր յարաբերութիւններ ստեղծէ։ Ընդհանրվող շահերի կանոնաւորման համար թուրքական կուսակցութիւնը առաջ է քշում լայն լուսաւորութիւնը և ոյժը, որի վրա նա պէտք է յենվի ժողովրդական մասսայի համար մղվելի կուիվ մէջ։ «Դբֆիյէ» կուսակցութիւնը համերաշխ է հայ դաշնակցականների և վրաց ֆեդերալիստների հետ՝ Կովկասեան ազգերի «ազատութիւնը և անկախութիւնը» պաշտպանելու գործում։ Ամենից շատ մշակված են «Դաշնակցութեան» և վրաց «սոցիալ-ֆեդերալիստների» ծրագիրները։ Հայ յեղափոխական կուսակցութիւնը պահանջում է «դեմոկրատական ֆեդերացիա Անդրկովկասի համար ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնաւորութեան հիմունքով», կապակցված Ռուսաստանի հետ ընդհանուր—պետական պաշտպանութեան խնդիրներով, զրաւմային սիստեմով, և արտաքին քաղաքականութեամբ, ունենալով և ֆեդերացիայի կենտրոնական պարլամենտ Թիֆլիսում։

Մօտերով ապա նորերս կազմված «Հայկական Դեմոկրատական կուսակցութեան» մասին, պրոֆէսսոր Խախանովը, յայտնելով որ նոր կուսակցութիւնը «ձգտում է Կովկասի բոլոր ժողովուրդների կուլտուրական միութեան և համերաշխ գործակցութեան» և իր ծրագրով մօտ է կանգնած սահմանադրական-ռամկավար կուսակցութեան ծրագրին, խօսելով նոյնպէս և վրաց սոցիալ-ֆեդերալիստների կուսակցութեան ծրագրի մասին, որ ձգտում է վրաստանի համար ուտոնոմ կազմութիւն ձեռք բերել, պահանջում է վրաց եկեղեցու ինքնագլխութիւն և նրա բաժանումն պետութիւնից, Խախանովը եզրակացնում է.

«Բոլոր այդ կազմակերպութիւնները ներկայացնում են կուսակցութիւններ էկլեկտիկական բովանդակութեամբ, առանձին ծրագիրներ ունեցող կուսակցութիւններ»։

*

«Бирж. Вѣд.»-ի ասելով, չը նայելով իր անլէգալ դրութեան, սահմանադիր-դեմոկրատական կուսակցութիւնը ներկայումս անընդհատ գործունէութիւն է երևան հանում Պետերբուրգում, բայանական կոմիտէները զբաղված են կուսակցութեան անդամներին Դումայի համար մատնանշված 12 անդամների ցուցակների առաջարկով։ Այդ ցուցակներից, կուսակցութեան իւրաքանչիւր անդամը պէտք է մատնանշէ 6 հոգու։ Իւրաքանչիւրին իրաւունք է տրվում իր ցուցակում մտցնել 12 անդամների ցուցակից բացակայ կազմակերպների անունները։ Իրրև պլեբիսցիտի հետևանք կը լինեն սահմանադիր-դեմոկրատների կողմից Պետական Դումայի անդամների վերջնական ցուցակները։ Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան լիդէրների ասելով, նոյնիսկ Նարվիլ բայօնում, ուր ազգաբնակութեան մեծագոյն մասը բանուորներն է կազմում, սահմ.-ռամկավարների շանսերը վատ չեն։ Գաւառում, նոյն սահմ.-ռամկավարներից բաղված տեղեկութիւնների համաձայն, դէպի սահմ.-ռամկ. եղած արամադրութիւնը աւելի սահմ.-ռամկ. է։ Իսկ այդ նկատմամբ է հոկտեմբերի 6-ին բոլոր դեպքերում։ Սահմանադիր ռամկավարները մեծ յոյսեր են դնում իրանց կուսակցութեան պարագլուխների փոխադրութեան մի քանի ուրիշ հեղինակաւոր ներկայացուցիչների։

*

Ինչպէս հաղորդում է «Вѣкъ» լրագիրը, մօտիկ ապագայում արտասահմանում կայանալու է հայ «Դաշնակցութիւն» ֆեդերացիայի IV-րդ ընդհանուր համագումարը։ Այդ համագումարին ներկայ են լինելու կուսակցութեան կենտրոնական կոմիտէների պատուիրակները Կովկասից, Թիւրքիայից, Ամերիկայից, Եգիպտոսից և Բուլգարիայից և մի-մի ներկայացուցիչ Ռուսաստանի և Արևմտեան Եւրոպայի հայ ուսանողութեան կողմից։ Համագումարում քննվելի կարգինալ հարցը համարվում է այն թէ կուսակցութիւնը Կովկասում ինչ գործունէութիւն է ունենալու։ Բանը նրանում է, որ Կովկասի «Դաշնակցական» ինտելիգենցիայի մեծամասնութիւնը, այսպէս կոչվող «երիտասարդ դաշնակցականները», որ այդ կուսակցութեան ամենից ծայրայեղ և սոցիալիստական ծուռն են կազմում, պահանջում են, որ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը զբաղվէ սոսկ թիւրքա-հայկական հարցով, ինչպէս առաջ, և բոլորովին չը խառնվէ Կովկասեան գործին, իսկ Կովկասում, «երիտասարդ դաշնակցականներն» կարծիքով, անհրաժեշտ է հայերի մէջ ստեղծել մի նոր յեղափոխական սոցիալիստական կուսակցութիւն, որը աշխատելու է Ռուս. սահմանի մեռնող յեղափոխական կուսակցութիւնների հետ։ «Հին» դաշնակցականները, ընդհակառակն, պնդում են, որ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը պէտք է իր հին գործունէութիւնը շարունակէ ինչպէս Թիւրքիայում, այնպէս և Կովկասում, որով նրա Կովկասեան գործունէութիւնը պէտք է ուտոնոմ լինի Թիւրքիայում կատարվող գործունէութիւնից։ Այս հարցի առիթով նախատեսվում է, որ համագումարում թերևս երկպառակութիւն ծագէ «հին» և «նոր» դաշնակցականների մէջ, որի հետևանքը, ամենայն հաւանականութեամբ, կը լինի այն, որ Կովկասում երևան կը գայ մօտիկ ապագայում մի նոր հայկական սոցիալիստական կուսակցութիւն, որ շատ մօտ կանգնած կը լինի սոցիալիստ-յեղափոխականների ծրագրին։

Ի միջի այլոց, համագումարը զբաղվելու է նաև կուսակցութեան անդամներից մի քանիսի անկանոն գործողութեան քննութեամբ—կարգապահութեան և զրամական զեղծումների նկատմամբ։

*

«Աշխատանք» թերթը խօսելով այն խորհրդակցութեան մասին, որ տեղի ունեցաւ վերջերս էջմիածնի դէպքերի առիթով, պաշտպանում է այն տեսակէտը, որ պէտք է ընդհանուր քննութիւն կատարել, որովհետև, ասում է նա.

Այն ներկայացուցիչները, որ այժմ ժողոված է, այստեղ, շատ թոյլ է միակողմանի, ուրեմն զուրկ թէ անհրաժեշտ ոյժից և թէ հեղինակութիւնից, և որովհետև հնարաւորութիւն չկայ ընդհանուր ժողովրդական ներկայացուցչութիւն հրաւիրել, կարելի է մի այլ բան ստեղծել, դնել գոյութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչներին և նրանց ժամանակցութեամբ քննութեան առնել ոչ միայն էջմիածնի դէպքը, այլ ընդհանրապէս այն բոլոր զեղծումները, բանութիւնները, որ կատարուում են մեր գաւառներում ժողովրդի վերաբերմամբ, այս կամ այն կուսակցութիւնների կողմից, գլխաւորապէս Դաշնակցութեան՝ որպէս ամենից ուժեղ կազմակերպութեան։

Այդ կարծիքն ելնելք պաշտպանում և մենք «Աշխատանքի» կողմից։

Ահա թէ ինչու։

Եօթ ութ ամիսներից ի վեր գաւառի զանազան անկիւններից բողոքներ են գալիս. մեղադրում է Դաշնակցութիւնը՝ յանձին իր մարմինների այն բանում, որ նրանք (մարմինները) գործում են մի շարք քամահելի բռնութիւններ ժողովրդի վերաբերմամբ, բողոքում են և մի այլ կազմակերպութեան՝ Հնչակեանների գործունէութեան դէմ երկրի այլ մասերում՝ (Շուշի, Ղարս, Սև-ծովեան շրջան, Արարատեան դաշտ և այլն և այլն։

Բռնութիւնը անձի դէմ, համոզմունքի դէմ, հասարակութեան կամ համայնքի դէմ եղելի է, մանաւանդ, երբ այդ բռնութիւնները կատարում են սոցիալական սկզբունքներ դաւանող կազմակերպութիւնների կողմից։

Շիտակ, ինքն իրան յարգող մամուլի պարտքն է բողոքել բռնութիւնների դէմ, ով և լինի նրանց հեղինակը։ Բռնութիւնների սովորած հասարակութիւնը, ժողովուրդները անպէտք են պատապարութեան համար։ Նրանք զիկանում են—ուսան և յանուն ժողովրդի ազատութեան՝ անհրաժեշտ է մաքառել բռնացողների դէմ և սովորեցնել հէնց իրեն ժողովրդին բողոքել, ձայն բարձրացնել։

Իսկ դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է անպէտ քննութիւն կատարել։ տատգիլ տեղն ու տեղը բռնութեան կեղեքման փաստերը և վերջը՝ պատժել յանցաւորներին։ Դա բարոյական մի մեծ հարուած կը լինի բռնակալների համար, մի կողմից և ապա՝ ժողովրդին կեղեքվելի ոգի, կՀանի նրան լքեալ, սարսափած զրութիւնից և նա սովորեցնի նրան բողոքել՝ ազատ լինելու, ազատ ապրելու համար, բողոքել և մաքառել իր իրաւունքների համար։

Այդպիսի մի զործ կարևոր է. անհրաժեշտ է»։

*

Մամուլի վերջերս նորածին օրգանների զոյութեան ընթացքում նկատվում է մի ընտրոյ երևոյթ. ամեն մի նոր օրգան սկզբում հանդէս է գալիս համեստօրէն, բայց նա շատ շուտով է դէն ձգում այդ հատկութիւնը և ամբարտաւանութեան գլուխ բարձրացնում։

Շատ ցաւում ենք, որ այդ տեսակ օրգանների շարքն է մտնում և «Աշխատանք» թերթը, որ արդէն (տես «Աշխատանք» № 44, «Կեանք և մամուլը» յօդ.) քարոզչի և ճառագայթների ու զրկիչեան քննադատի դեր է կամենում ստանձնել նաև «Մշ.»-ի վերաբերմամբ։ «Մշ.»-ի ամբողջ 35-ամեայ գործունէութիւնը, հայ մամուլի պատմութիւնը անհերքելի ապացոյց է, որ «Մշ.»-ը եղել է միշտ հայ ժողովրդի շահերի պաշտպան, որ նա միշտ կանգնած է եղել մերկացնողի, շնաակ հրապարակասուս թեան բարձրութեան վրա, որ նա շարունակ ասատվնորդվել է «աչքից հեռացած, մոքից մոռացած» գիւղացու, աշխատաւորի շահերով, որ նա ձգտել է «վերջ դնել մեր գաւառում տիրապետող անարխիային կամ դեսպոտիզմին, մեր ժողովրդի թմված զրութեանը...»

Սակայն, այժմ հարկ է մի տարի զոյութիւն ունեցող «Աշխատանքը» կասկած է յայտնում այդ մասին և իր այդ կասկածը հիմնում է այսպիսի մի փաստի վրա. որ «Մշակը» տպել է իր № 262-ում մի լաց նամակ, ուղղված հայ վաճառականներին մի կողմակի անձի կողմից, որ յայտնում է թէ «վաճառականութիւնը անարդանքի է ենթարկված այն անձանց կողմից, որոնք նրա հաշվով են ապրում»։

Ահա ձեզ փաստ (?), որ հիմք է տալիս «Աշխատանքին» կասկածներ յայտնելու «Մշակի» անկեղծութեան մասին։

Հազար անգամ ասված և կրկնված է, որ «նամակներ խմբագրութեան» բաժինը որևէ կապ չունի լրագրի ուղղութեան կամ հայեացքների հետ, որ այդ նամակները չեն կարող որևէ կերպով խմբագրութեան տրամադրուած թիւնը յայտնել։ Ամեն մի շիտակ, անաչառ, բարեխիղճ և առաջադէմ թերթ բաց է ապահում իր էջերը «նամակներ խմբագրութեան» բաժնի մէջ ամեն մի անհատի և ուղղութեան ներկայացուցիչների առաջ, դեկավարվելով andiatur et altera pars սկզբունքով։

«Մշակը» դասական դպրոցի թերթ չէ, այլ ընդհանուր ժողովրդական թերթ, որ նա կոչված չէ պաշտպանել բացառապէս որևէ մի դասակարգի շահերը, այլ նա կոչված է պաշտպանել ամբողջ ժողովրդի, միևնոյն ժամանակ արդարութեան, ճշմարտութեան և ընդհանուր կուլտուրական ու համամարդկային շահերը։ Ոչ ոք այնքան չէ հարուածել բուրժուազիական դասակարգը, ինչպէս «Մշակը», երբ նա նկատել է, որ բուրժուազիան ՀՄասում է գիւղական տարրերի և աշխատաւորների շահերին։

ՄԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

—

Դօրբա, դեկտեմբերի 3-ին

Ով ձմեռ ժամանակ ապրել է Զանգեզուրում, նա անշուշտ լսած կը լինի Ուչթափայի քաջագործութիւնների մասին. թէ ինչպէս բուք բորանը, ձիւնի քուլաները, մարդկանց ծածկում, սպանում են, ինչպէս մարդիկ իրանց ձիերով միասին ձիւնի հատ շերտերի տակ են մնում, կամ կարաւանները ստիպված են լինում մի քանի օր սպասել Սիսիանում, մինչև եղանակի լաւանալը, բուք բորանի դադարումը։

Իւրաքանչիւր ձմեռ 5—10 և աւելի զոհեր է տանում Ուչթափան։ (Մօտ 35 վ.)։

Կարաւանների և երթևեկութեան անկանոնութիւնը տակաւին ՀՄասեր է բերում թէ Զանգեզուրին և թէ Սիսիանին, ուր ամենաէժան մթերքն անպա, անկանոն հաղորդակցութեան, դժուարին ճանապարհի պատճառով, կրկնակի եռակի թանգանում է։

Սակայն, շնորհիւ բազուբնակ պ. Լուդովիկ Յարութիւնեան Սարգսեանցի, մօտ ապագայում բարա կուսնանք այդ ճանապարհը ապահոված տեսնելու։

Յարգելի պարոնը եղել է Զանգեզուրում, շինել է տուել Տաթևի Սատանի կամուրջի վրա գտնող հանքային ջրի մօտ լողարաններ, (երկու սենեակներ) և գիւղացիներին մեծ յարմարութիւն տուել այդ ջրից օգտվելու համար։

Այժմ էլ նրա առաջին բարերարութիւնից յետոյ, մենք մի բազմամարդ ժողովում լսեցինք նրա երկրորդ բարերարութեան մասին. Ուչթափայում քարվանսարայ շինելու յանկութեան։

Պարոնը խոստացել է Ուչթափայի որոշ տեղերում քարվանսարաներ շինել, և ճանապարհորդներին մեծ յարմարութիւններ տալ։

Այսօրվան մեր ժողովում որոշվեց առաջինը՝ Եայջու հին քարվանսարայի տեղը, երկրորդը Գօրիսի գեղի մօտ, և երրորդը՝ Շաքառուի ջրի վրա շինելու։ Այս երեք քարվանսարաների գոյութիւնը ամենամեծ մխիթարը կը լինի մարդկանց բուք-բորանից ազատվելու համար։

Պ. Սարգսեանցի հանրօգուտ այս ձեռնարկութիւնը որքան մեծ ուրախութիւն պատճառեց 10-նեակ գիւղացիներին, սակայն այժմ անհարիւն է իմարի է (Անցեալ օրը 3 թուրք անյայտացան, բուք բորանի կուլ գնացին)։

Մնում է, միայն գարունը սպասելուն պէս գործի դիմել։

Բարվանսարաների շինութեան վերահսկիչ և ծախսարար պ. Սարգսեանը աչքի առաջ ունի Շէնհուայր գիւղի տէր Ս. քահանայ Բալեանցին, որին և յայտնել է պարոնը իր բարերարութեան մասին։ Նոյն գիւղի գաղտնի էլ նուիրել է 100 ր. գրքեր, տէր Յովհաննէս քահանայ Տէր-Արզարեանի միջնորդութեամբ։

Վերջինս, իր աշխարհական ժամանակ մեզ մօտ ուսուցիչ էր, (Գօրիսում, Շէնհուայրում) և անուշտ մեծ խրախուսանք տուած կը լինի պ. Սարգսեանցին, մեր բարերար ձեռնարկութեան կարօտ գաւառում այդ տեսակ գործ սկսելու, որոշ դիւրութիւն տալու երկու գաւառամասերին։ Նախ ամայել և երկրորդ գրի նախանձ զգալ է մեում զանգեզուրցի հարուստներին։

Պ. Սարգսեանցի ձեռնարկութիւնը մեր գաւառի ներկայ անհրաժեշտ բարերարութիւններից մեծն է և կարելը իր տեսակէտով, իր գեղեցիկ օրինակով։

Մեր սրտագին շնորհակալութիւնն ենք յայտնում բարերար պ. պ. Լ. Սարգսեանցին և նրան խորհրդատու տէր-Յովհաննէս քահանային. այդ հանրօգուտ գործը թող երբեմն օրինակ ծառայի և այլ տեղերում եղած նման անհրաժեշտ գործի ձեռնարկութեան մղէ մեր հարուստներին։

Գեղեցիկ գործը արժանի է հրապարակով շնորհակալութեան։

Սաղանդարեան

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

—

«Россія» լրագրի № 313-ում տպված է մի թղթակցութիւն Կ. Պօլսից հայոց հարցի և հայ յեղափոխական կազմակերպութիւնների մասին։ Զը նայելով որ այդ թերթի ուղղութիւնը շատ լաւ յայտնի է և առանձին վստահութիւն դէպի նա չէ կարելի տածել, բայց ծանօթանալ կիսապաշտօնական թերթի հայեացքների հետ անօգուտ չէ, որովհետև նրանք արտայայտում են ռուսական որոշ շրջանների հայեացքները։

«Վերջին նամակում ես խօսեցի հայկական յեղափոխական կոմիտեների յանցաւոր գործունէութեան մասին, իսկ այսօր ոստիկանութեան մինիստրութեան մէջ Էջդմէլից (գաւառական քաղաք Զմիւռնիայի մօտ) տեղեկութիւններ են ստացվել, որ տեղական իշխանութիւններն աշխատել է երևան հանել ռումբիր պատրաստելու լիակատար պատրաստի արհեստանոց 98 կաղապարներով, ուժանակի բաւական մեծ քանակութիւն, հրանօթի զնդակներ, կապիչ թելեր, պատրոնցներ, զլանակներ և այլ նման պարագաներ, որոնք, ինչպէս ասում են լաւատեղեակ շրջանների մէջ, պատրաստելիս են եղել, կրկնելու Ելդզէի խելաց փորձը, որ մօտ յիսուն բոլորովին անմեղ զոհեր տարաւ։

Որքան էլ որ միանգամայն համակրելի է Թիւրքիայում ապրող հայերի թշուառ զրութիւնը, Թիւրքիայի—ուր ոչ մի միջոց ձեռք չէ առնվում դժբաղդներին կիսամայրենի քրդերի խժդժութիւններից և բռնութիւններից պաշտպանելու համար, այն քրդերի, որոնց մէջ հայերը սոսկալի են ապրելու, որքան էլ որ միանգամայն արդարացի են հարքն էլ ոչ միայն Եւրոպայի ուշադրութիւնը վերաբերմամբ օրինական պահանջները, բայց և այնպէս անկարելի է չը վրդովվել և չը դատապարտել այն ծայրահեղ միջոցները, որոնց դիմում են յեղափոխական կոմիտէները դէ... մի կողմից զարհուրելի ուշադրութիւնը Հայաստանի վրա Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրելու նպատակով, և միւս կողմից որպէս զի ցոյց տալ «ազատագրական շարժման» ատաւորին գումարներ ստանելու համար։ Մինչդեռ Թիւրքիայի զանազան անկիւններում ռումբերի նորանոր պահեստներ յայտնաբերելը դեռ չէ ապացուցանում Լօնդոնում, Պարիզում, Կահիրէում և Ալէքսանդրիայում նստած յեղափոխականների գործունէութիւնը և շրջահայեցողութիւնը։ Զէ՞ որ եթէ նոյն իսկ պահեստատեղիներում գտած բոլոր ռումբերը գործադրվին, դրանով մաղ անգամ չէր բարելավի հայերի վիճակը, այլ ընդհակառակն, աւելի կը ծանրացնէր։ Միայն Ալլահը գիտէ, թէ ինչպէս կը վերաբերվէին Անատօլիայի խորքերում ապրող Փանտիկոս և կիսավայրենի Թուրքերը դէպի-խալիֆի կեանքի դէմ նոր մահափորձ կատարելու պատրաստվող հայերը, եթէ հէնց նոյն խալիֆը միջոցներ ձեռք չառնէր, որպէսզի հայկական դաւադրութիւն նիւթելու լուրը չը հասնէր Իսլամ աշխարհ և հնազանդ ոդրդ, որոնք սուլթանին ոչ միայն փաղիշահ են համարում, այլ և մարգարէի տեղապահ... Հայ լրագրների խմբագրատներում նստած և հայկական կոմիտէներ կազմող ազգ և ըմբոստ գլուխները, իրանց ժամանակը սպանելով Կահիրէի կաֆէշանտաններում և Ալէքսանդրեան շուկայում, ուրախ և անհոգ, կարեկցութեան ամենայնչէին մասնիկ անգամ չեն տածում դէպի իրանց հաւատակիցները, որոնք ստիպվում են դրանց հաւատակիցները։ «Դբֆիյէ» կոմիտէի որոշմամբ», մէկը միւսից աւելի խելաց և անիրագործելի յանձնարարութիւններով, և որոնք այդ պատճառով էլ դիւրութեամբ են ընկնում Թիւրքական բանտերը, հազիւ կարողանալով կալանաւորվելու ժամանակ մահափորձ կատարել ոչ մի բանում յանցանք չունեցող ժանդարմի կամ ոստիկանի կեանքի դէմ...

Հապի թէ այսօրվանայ ճանապարհով հայկական կոմիտէները կը շահեն Եւրոպայի համակրանքը և կը ստիպեն մեծ պետութիւններին՝ միջամտել ի պաշտպանութիւն հայերի, որովհետև մարդկութեան պարզ զգացմունքը ասում է, որ որքան էլ ուժեղ յանատատութիւն տիրէ կօմիտէներին, որոնք իրանց գլխաւոր նպատակ են դրել՝ ունենալ իրանց տրամադրութեան տակ մի գանձարկղներ... ազատագրական շարժման համար, սակայն նրանք գոնէ որոշ կարեկցութիւն պէտք է ունենան դէպի իրանց հաւատակիցները, որոնք հեծում են թիւրքական բանտերում և դէպի նրանց ազերջանիկ և դժբախտ ընտանիքները, որոնք ձեռքերը կարկառած ողորմութեան համար, քաղցած և կիսամերկ թափառում են անպատակ՝ թիւրքական քաղաքների և գիւղերի փողոցներով։ Բաւական չէ հայկական լրագիրների էջերում պաշտպանել հայկական շրջայակիրներին և եռանդով և շանթալից կռիւ մղել նրանց համար, քանի որ այդ նոյն շրջայակիր հայերի պատրաստած ազազակը յանցագործութիւններին ծանօթ անձանց վրա—հայկական լրագիրները ոչ մի ազդեցութիւն չեն թողնում։ Իսկապէս, երբ թիւրքական իշխանութիւնները ձերբակալում են հայ չարագործներին, կամ դատարանը մահվան պատժի է ենթարկում ազնուագարը մահվան պատժի է ենթարկում ազնուագարը իր պաշտօնը կատարող զինուորի մարդասպանին,—հայկական յեղափոխական լրագիրները սկսում են փրփուրը բերանին հայհոյանքներ և լուսանքներ թափել սուլթանի և նրա կառավարութեան հասցէին։ Սակայն դրա փոխարէն, երբ ինչպէս օրինակ Բաղմանթաշում, փաքրիկ երեխաների երիտասարդ մայրը կամ գերեզմանի դուռը հասած ծերունին, որ երբէք մէկին չէ վիրաւորել, երբ պատուաւոր ծառայողը, որ պատուաւոր կերպով կատարում է իրան յանձնած գործը, ընկնում են գիշերային մթութեան և հանգստի ժամանակ, ինչպէս գողեր, նրան սպրդածների ռումբերի կամ գնդակների տակ,—որբուկներն ու մեզմ արտասվելը, հեծկլտանքը անելի են հայկական ազատագրական շարժման զեկավարների ականջներին, և եթէ հանում էլ են, բայց և այնպէս չեն խանգարում նրանց կոշատացած սրտերին սովորական անփութութեամբ ծաղասարել կաֆէ-շանտանի «ատաղին», որի փաստ-փուլսաի համար ոչ սակաւ ծախսվում են համարեա երկրի բոլոր անկիւններում ժողոված գումարները, որ գոյանում են այն խղճալի զրօշներից, որ զոհում են պարզամիտ հայերը, որոնք այդ զրօշները ձեռք են բերում հարաւի արևի կիզիչ ճառագայթների տակ։

Հայկական շարժման զեկավարների տաքտիկան սոսկ լաւագոյն կօզը (խաղալու թղթերի մէջ) է ժամանակաբերում Թիւրքական կառավարութեան ձեռքը և նրանցից հեռուն է հրում ոչ միայն Եւրոպայի համակրանքը, այլև իւրաքանչիւր ազնիւ մարդու համակրանքը, մարդու, որ սպանութիւնը չէ արդարացնում նոյնիսկ այն ժամանակ, երբ այդ սպանութիւնը դիմակաւորված է «յեղափոխական յեղաշրջման անխուսափելի զոհի» գեղեցիկ տոգոր տակ...*) Ցինվելով հայկական մահափորձերի նոր փաստերի վրա, սուլթանը վերջերս մերժեց Բուգվէլտի միջնորդաբերութիւնը, որին ֆրանսական կոմիտէտը գիմել էր մի պետիցիայով, հրաւիրելով նրա ուշադրութիւնը Թիւրքիայում ապրող հայերի ծանր զրութեան վրա և խնդրելով նրա միջամտութիւնը լուծելու այդ բարդ հարցը։

Զը նայելով նրան, որ հայերի այդ պատիւնան տարգրվում է Եւրոպայի քաղաքական շուռ, ակամաւոր զորձէնչերից և խաղաղութեան գաղափարի կողմնակիցներից, սուլթանը կարողացաւ մերժել Բուգվէլտի միջնորդութիւնը, ապացուցելով Մեծագեղ Նանամնների գեսպանին, որ հայ յեղափոխական կոմիտէները, ի նկատ առնելով Ամերիկայի համակրանքը, ապանում են նրա կեանքին և գերազոյն իշխանութեան։ Եօդեմիր քաղաքի ոստիկանութեան, ուր երևան է հանված ռումբիր պատրաստելու լիովին յարմար արհեստանոց, յայտնված է բարձրագոյն շնորհակալութիւն և սուլթանի տեսական գումարներից նրա իւրաքանչիւր անդամին տրված է նուէր ոսկիկի քանակը իբրև վարձատրութիւն։ Մայրաքաղաքի ոստիկանութիւնը փութաջանութեամբ խուզարկութիւններ է կատարում հայկական թաղամասերում և առաւելապէս արթնն հսկում է Ռուսաստանից—«յեղափոխական վարակի այդ բնից» ինչպէս ցասումով ասում է պալատական «Իկդամը»,—եկողներին։ Մայրաքաղաքի կենտրոնական բանտը լիքն կամ, ինչպէս թիւրքերն են ասում, «քարէ զօրանոցը» լի է ձերբակալված հայերով և երիտասարդ թիւրքերով, և ուստի ծովային վարչութեան — Ոսկեղջիւրի յարձանքներին նվվող զօրանոցների մի մասը թողնված են ոստիկանութեան մինիստրի տնօրէնութեան ներքոյ և ծառայելու են դեռ անցեալ դարում քանտարկված «քաղաքական յանցաւորներին» հարթելու, յդկելու նոր տեղ...

Ելդզ-Բէյօգլուում—Պարիզում զեսպան Մուներ-փաշայից տեղեկութիւն է ստացվել, որ Ֆրանսիայում և Անգլիայում գտնվող երիտասարդ թիւրքերի կուսակցութեան պարագլուխները կոչել են միմեանց հետ, գանձարկղները դատարկ են, հովանաւորողները լոգնել և հիասթափվել են։ Բայց որ միևնոյն ժամանակ հայերը ֆանատիկ զործունէութիւն են ասպարէզ հանում՝ երկրում սէրբոբ մըցնելու նպատակով, և ուրեմն հասկանալի է այն կասկածոտութիւնը, որով և վերաբերվում են թիւրքական ոստիկանութեան պաշտօնեաները Փաղիշահի մայրաքաղաքի իւրաքանչիւր հային...

ՇՈՒՇՈՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Դեկտեմբերի 11-ին

Ամսիս 3-ին, բէլալական դպրոցի վերատեսուչ պ. Կոնօկօտին պաշտօնով տեղափոխվեց Թիֆլիսի բէլալական դպրոցը և նրա տեղ նշանակվեց պ. Կոզիւլին։

Պ. Կոնօկօտինը կարճ ժամանակվայ ընթացքում կարողացաւ աշակերտութեան սէրն ու համակրանքը գրաւել։ այնպէս որ նա սիրելի էր և ուսուցիչներին և աշակերտներին։ Նա յայտնի էր իր խաղաղ և բարի բնաւորութեամբ և գիտէր մանել չքաւոր աշակերտների դրութիւնը, նա համարեա թէ բոլոր չունևոր աշակերտներին ազատում էր ուսման վարձից։ Նա խեղճ աշակերտի լացն ու արտասուքը սրբում էր և այդպիսով հոգեպէս ազնվացնում մխիթարում և սփոփում նրանց վրտերը։ Աշակերտութիւնը կամենալով մի չոշափելի գործով անմոռաց կացուցանել նրա յիշատակը՝ մի արժէքաւոր ընծայ

բանի 2. դասատուն աւարտած՝ այժմ Թիֆլիսում է. իսկ միւսը, 16 տարեկան, Լաղարեան՝ եմեմբերի VII դասատուն է և բա մենայնի պատրաստի պատանի է, ապագայում պիտանի հասարակական գործիչ լինելու։ Թողնում ենք հասարակութեանը դատելու, ինչպէս աւելի նպատակայարմար է յարգել Արովեանի յիշատակը։

Նուկէն

Ալէքսանդրոպոլ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Նոր-Բայազէտ, դեկտեմբերի 8-ին

Օրվայ հրատապ հարցը մեր քաղաքի հասարակութեան համար մեր սառաբստայի և իր օգնականի ընտրութեան հարցն է, որը խաղալիք է դարձել իրաւասուների ձեռքում։ «Մշակի» № 239-ում գրած էի, որ քաղաքային աւագի և իր օգնականի ընտրութիւնը, որ նշանակված էր հոկտ. 20-ին՝ յետաձգվից նոյն ամսի 30-ին։ Սակայն այդ օրը նոյնպէս չը կայացաւ ընտրութիւնը, քանի որ հոկտեմբերի 27-ին վարչութեան անդամների արտակարգ ժողովը ընտրելով քաղաքային աւագ պ. Արծրունուն Երևան գնալու համար, ընտրութիւնը յետաձգվից նոյեմբերի 10-ին։ Բայց այնուամենայնիւ այդ օրը դարձեալ տեղի չունեցաւ ընտրութիւնը ձայնաւորների մեծամասնութեան բարեհաճութեամբ, որոնք պնդեցին դարձեալ հաշուետուութեան վրա, թէ «թող վերջնականապէս քաղաքային բոլոր հաշիւները աւագը վերջացնի, մաքրվի հաշուետուութեան վերաբերմամբ և ապա ընտրութիւն կայացնվի»։ Այն ինչ հաշիւները մինչև այժմ չեն վերջանում, և գուցէ բոլորվին էլ չը վերջանան, քանի որոշ հաշուետուներն են ուզում հասկանալ քաղաքային աւագին և ոչ վերջինս հաշուետուներին։ Եւ չը նայելով, որ բացի հաշուետուներից ընտրվել են նաև 10 հոգուց բաղկացած միջնորդներ, որոնք ի պաշտօնէ պէտք է ներկայ գտնվէին հաշուետուութեանը և միջնորդէին երկու միմեանց հակառակ կուսակցութիւններին, վերջ տալով նրանց անտարտ գործունէութեանը, սակայն նրանք մի քանի օր ներկայ լինելով հաշուետուութեանը, դարձեալ չը կարողացան հաշտեցնել հակառակ սրտերը և վերջացնել հաշուետուութիւնը, քանի որ այդ գործողութիւնը գնալով էլ աւելի սուր բնաւորութիւն ստացաւ, որի պատճառով ստարսաա Արծրունին նոյնիսկ ըստ պատնական թուղթ գրեց հաշուետուների և միջնորդների ու ձայնաւորների մի քանիսի խան ժողովի պ. նախագահին, որ չէ կամենում հաշիւ տալ այնպիսի անձինքներին, որոնք ամեն կողմից հակառակ են գնում իր դէմ։ Եւ այլ այսպիսի անտարտ դէպքեր...

Այսպէս թէ այնպէս, մեր քաղաքային աւագի և իր օգնականի ընտրութիւնը մի գործական հանգոյց է դառել մեր հասարակութեան համար, որի գործունէութեան դիպը յանձնվում է 15 հոգի ձայնաւորների, որոնք պատրան են հասարակական շահերի տեսակէտից բարի գործեր կատարել ժողովրդի համար։ Սակայն ձայնաւորներն էլ իրանց են ունեն և թաղայութիւնը։ Եւ ահա քանի ամիս է, որ ընտրութիւնները նշանակվում և յետաձգվում են, կարծէք թէ խաղալիկ են դարձել խնամատար մեր քաղաքային վարչութեան անդամների համար, քանի որ ընտրութիւնն առաջ նշանակված էր 20-ին սեպտեմբերի, որը յետաձգվով՝ թողնվց 20-ին հոկտեմբերի. ապա յետաձգվց նոյն ամսի 30-ին. իսկ ապանոյեմբերի 10-ին, երբ դարձեալ անպէտ դալմաղով թողնվց դեկտեմբերի 23-ին... ձիշտ գայլի շարական, որը շաւերի համար գուցէ ձեռնտու է, իսկ միւսներին անձեռնտու... Ինչ և իցէ, այս ամսի 23-ին է մինչև այլ հարցերի զրված է նաև ստարսաայի և իր օգնականի ընտրութեան հարցը։ Ձայնաւորները ուղղակի ասասնում են, որովհետև չեն գտնում մի սքանչելաւոր թեկնածու քաղաքային աւագի պաշտօնի համար։ Այժմեան աւագ Արծրունուն դէմ են շաւերը, իսկ ուրիշ Ասատուն ասյ։ Նրա անյեանն էր պ. Յ. Իսուիֆեան, որի լինելիութիւնը անվաւեր ճանաչվելով՝ այժմ աւելի հակառակ է վարվում «Արծրունու և կուսակցութեան» դէմ և իր կուսակցութեամբ ամեն ջանք է գործ դնում տապալել նրա բեմիմը, այսինքն հին կազմը մնամբ փոխել։ Եւ մինչև այժմ էլ մտադրութիւն կայ դրսից մի մարդ ճարել ստարսաայի պաշտօնի համար Այժմ չը գիտենք ում են ընտրելու և այդպէս վարչութեան անդամները շուարած մնացել են... Ահա և դեկտեմբերի 23-ը, ընտրութեան օրը, որին մնում է մի քանի օր միայն. պէտք է վերջապէս կայացնել ընտրութիւնը և ժողովրդին իր տարատ դրութիւնից ազատել. ապա թէ ոչ՝ ամօթ է այդքան ձգձգել գործը, որի հետևանքը կարող է էլ աւելի բարդութիւններ ծնեցնել և աւելի անախորժութիւններ առաջ բերել։

Վերջացնելով խօսքս՝ խորհուրդ կը տայի մեր պ.պ. ձայնաւորներին մի կողմ թողնել անձնական տուրութիւնը և ի սէր քաղաքային շահերի, հանգիստ սրտով և բարեկամութեամբ յարել ընտրութեան գործին դիտակցաբար։

Որսորդ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԸՆԹԵՐՑՈՒԹԻՒՆԸ Ի. Գ. ԿԱՐԳԱՐԵՏԵԼՈՒ ՎԻՐԱՒՈՐՎԵԼԸ

Դեկտեմբերի լոյս 14-ի գիշերը, ցերեկվայ ժամը 4-ի մօտերը, Միքայէլեան հիւանդանոցն է տարվում վիրաւորված գրութեամբ Թիֆլիսի արքունական թատրոնի ընժիսոր Իլիա Գէօրգիևիչ Կարգարետելին։ Վիրաւորվածը կարողանում է պատմել հետևեալը.

«Դեկտեմբերի 13-ին, արքունական թատրոնում օպերան վերջացաւ զիշերվայ ժամը 11 և 10 րոպէին. ժամը 11 և կէսն էր, և ես տուն գնացի. ապրում եմ Օրբելիանօվսկի փողոցում, որով ես ստիպված էի իջնել Բարատինսկի փողոցով։ Ալէքսանդրեան այգու մօտ ինձ շրջապատեցին երեք հոգի.—մէկը թաղային վերակացուի հագուստով, միւսը՝ ոստիկան, իսկ երրորդը չերքէզկայով։ Նրանք հարցրին, ինչպէս է իմ ազգանունը։ Ես ասացի, որ Թիֆլիսի արքունական թատրոնի ընժիսոր Կարգարետելին եմ։ Այն ժամանակ թաղային վերակացուն ինձ ասաց, որ գեներալ-նահանգապետը հրամայել է ինձ անպայման ձերբակալել։ Ես ստիպված էի հնազանդվել նրանց պահանջին։ Ինձ նստեցրին կառք, բոլորն էլ նստեցին ինձ հետ և հրամայեցին կառապանին քշել Օրթաճալա, նահանգական բանտը։ Մենք մօտեցանք Օրթաճալայի այգիներին. այստեղ նրանք ինձ հրամայեցին բաց թողնել կառապանին և ասացին, որ գրանից յետոյ բանտ պէտք է գնալ ոտքով։ Ես ստիպված էի հնազանդվել և այդ պահանջին։ Նրանք երեքն էլ ցաւում էին, որ ստիպված են ինձ ձերբակալել և ինձ հետ վարվում էին շատ քաղաքավարի։ Այն ժամանակ ես խնդրեցի թաղային վերակացուին թոյլատրել ինձ՝ մի որ և է տեղ մի թուղթ գրել, ինչպէս կնոջս—տունը, այնպէս և արքունական թատրոնի վերատեսուչ պ. Ակիմովին և նրանց տեղեկութիւն տալ իմ մասին. թաղային վերակացուն յօժարութեամբ և սիրալիր կերպով ընդունեց իմ առաջարկը և ես խմիչքների մօտակայ խանութներից մէկում երկու թուղթ գրեցի կնոջս և գնդապետ Ակիմովի անունով և յանձնեցի թաղային վերակացուին, որը խոստացաւ կատարել խնդիրքս անմիջապէս գիշերն և եթ։ Ապա ինձ տարան առաջ դէպի բանտը։ Թաղային վերակացուն յետ մնաց։ Միւս երկուսը խլեցին ինձանից ժամացոյցս, փողերս, անցաթուղթս և թատրոնի տոմակը, ապա չը բաւականանալով գրանով, ստիպեցին ինձ վրայ ատրճանակից կրակ պարպեց։ Գնդակը կպաւ պարանոցիս, ես ընկայ, սրից յետոյ ստիպեցին նանց իմ կօշիկները, և բոլոր էլ հեռացան։ Ես, վիրաւորված, առանց կօշիկների, խնաւ գետնի վրա թափառում էի մինչև ժամի 3-ը, որից յետոյ իմ ազատների վրա հասան մի քանի մարդ և ինձ հիւանդանոց տարան։ Ես բոլոր յանցաւորներին յիշում եմ երեսանց։ Այդ թաղային վերակացուին միշտ կը ճանաչեմ, նա սկզբում ամեն ժամանակ կանչված էր լինում «Тифлисъ» խմբագրատան մօտ, և այժմ ծառայում է թէ ոչ—չը գիտեմ. նա միջահասակ է, շիկահեր, ոստիկանը—բարձրահասակ, լաղար, և լեզուն էլ նոյնպէս կարող եմ ճանաչել։»

Վիրաւորվածին անմիջապէս բժշկական օգնութիւն է հասցնում։ Գնդակը մնացել է պարանոցի մէջ. ընկնելուց ջարդվել է նրա քիթը։ Ուռուցքներից և երկար պառկելուց թմրել են նրա ձախ ոտքը և ձախ ձեռքը։ Վատ է գործում նաև աջ ձեռքը։ Հիւանդանոցից վարչութիւնը անմիջապէս յայտնել է՝ ինչպէս արքունական թատրոնի վարչութեան, այնպէս և վիրաւորվածի ընտանիքին։ Եկել է նաև զինուորական քննիչ, որը և քննութիւն է կատարելու։

Երէկ վիրաւորվածին այցելել են արքունական թատրոնի վարչութիւնը և արտիստները։

Զինուորական քննիչի հրամանով ամեն բան պէտք է ցոյց են տրվում հերթով Թիֆլիսի թաղային վերակացուները, սակայն մինչև օրս նրանց մէջ յանցաւորը չէ երևացել։

Պէտք է ենթադրել, որ այս ապաղաղով գործը կը քննվի ամենայն խստութեամբ։ Անկասկած թատրոնի վարչութիւնը նոյնպէս շահախնդիր է ապահովելու իր ծառայակիցներին։

(«Знаніе»)

ԱԽՄԱՏՈՎԱՆՈՅՆ ԲԱՐՈՒՅԱԿԱՆ ԵՒ ՄՏԱՒՈՐ ԿՈՂՄԵՐԸ

I

Մի որոշ դասի մարդիկ վերջին ժամանակներս յաճախութիւն ունեն կարդալու, որ իրանք հայ ժողովրդին յեղափոխականացրել կերպարանափոխել են, որ էլ չը կայ առաջվայ գլխիկոր, ցաւատանջ ստրուկ հայը, այլ կայ գիտակցող և բողոքող աշխատաւոր մասա, որի մի նմուշն երևաց մօտ օրերս «Երկիրը» լրագրում, իբրև բողոք «Մշակի» և «Մուրճի» դէմ։

Վերջին այս երեք տարիները պատմական այնպիսի ժամեան հանդիսացան հայկական իրականութեան մէջ, որ դեկավարող դաշնակցական մարմինները որ կողմն որ ուղղէին ժողովրդին, այն կողմն և գնալու էր նա։ Ցաւօք սրտի այդ շրջանի մեր ժողովրդական դեկավարները չը կարողացան օգտվել հանգամանքից և իրանց ստեղծած մթնոլորտով խեղդեցին այդ յարմար պատմական վերածնդան ժամանակը և ժամանակաւոր պատնէշ դրին հայի առաջխաղացութեանը։ Գալասը լրագրերից հայ-թուրքական ընդհարումները, որոնք հնարաւորութիւն տուեցին զանազան բաղդախնդիր անձանց յանուն ինքնապաշտպանութեան տանջել, կեղեքել ժողովուրդը։

Նախ քան կալուածքների գրաւումը ամեն աշխատաւոր արհեստաւոր աշխատում էր իր երեսի քրտինքով ապրել, ապնիւ վարք ու բարք ունենալ—յատկութիւններ, որ մարդուս տանում է դէպի ինքնաճանաչութիւն և կուլտուրական կեանք։ Կռիւ էր մղվում մեր գաւառի երկար տարիներ ժողովրդի արիւնը ծծող վամպիրների—վաշխառուների դէմ։ Պատարակվում էր արբեցողութիւնը և թըղթախաղը, նամանաւանդ ծլող երիտասարդութեան մէջ, որ ձգտումն էր ցոյց տալիս մտնելու ինտելիգենտ դասին և մասնակցութիւն ունենում թատրոնի և ուրիշ հասարակական երևոյթների մէջ։

Նոյնիսկ նկատելի էր, որ հետզհետ է աղաքաղքին թողնում էր իր պապենական տարազը, փոխելով արևալուխը և չերքէզկան պիժամայով։ Ձիշտ է սրանք արտաքին երևոյթներ են, բայց նրանց հետ ծնում զարգանում էին ներքին յատկութիւնները, ինչպէս վերևում անցողակի նշուեցի։

Այդ ժամանակամիջոցում է հիմնվել և զարգացել մեր մի հատիկ գրադարան ընթերցարանը, որ իր զրքերի և պարբերական լրագրների հարստութեամբ, եթէ չեմ սխալվում, գաւառական քաղաքների մէջ Շուշուց յետոյ երկրորդ տեղն է բռնում և ուր այցելում էին բաւական թիվ արհեստաւորներ։

Բայց հիմա մեր քաղաքը մոռնդին հակառակ երևոյթներ են աչքի են ընկնում։ Շատացել են օղեանոցներ ու սրճարանները. բազմաւոր քաղաք է չէ, ընթերցող. 5800 բնակչութիւն ունեցող մի քաղաք ունի 10 սրճարան, 18 գինետուն, և մի հատ ընթերցարան, որ հոգեվարքի մէջ է և եթէ քաղաքի ձեռքը չը լինէր, հիմա վաղուց փակված կը լինէր։ Սրճարանները, եթէ վերջ լինեն թղթախաղից, կարելի է նրանց շատանալը լաւ երևոյթ համարել, ուր հաւաքվում են մարդիկ և յաճախ մտքերի փոխանակութիւն է լինում, կարդում զանազան լրագրներ ու գրքեր, բայց արի տես, որ թղթախաղի բոյն են դառել։

Այդտեղ են հաւաքվում և վաճառական և արհեստաւոր և ծառայող և ինտելիգենտ մարդիկ և ժամերով նստում թղթի տակ և ժամանակ անցկացնում։ Թղթախաղը ներելի է միլիոնատէրերին և կալուածատէրերին, որոնք երեսի քրտինք ասած բանը չը գիտեն, այլ միայն այն գիտեն, որ տարին այսքան միլիոն, այսքան հազար եկամուտ ունին։ Իսկ արհեստաւոր մարդուն, որ օր աշխատում է, օր ուտում է, ոչ թէ ներելի է, այլ մահացու յանցանք, նամանաւանդ ձմեռը, երբ Ախալքալաքում աշխատանքը համարեա թէ կանգ է առնում։

Իսկ գինետների մատուցած ծառայութեան մասին խօսել էլ աւելորդ է, որովհետև բոլորին յայտնի է՝ թէ ինչ է նշանակում «духанъ распивочно и навынось»—վատնումն թէ նիւթական և թէ բարոյական այժերի։ Հիմա տեսնենք թէ ովքեր են այս գինետների և սրճարանների այցելուները։ Եթէ մենք վիճակագրական տեղեկութիւն կազմելու լինենք, կը տեսնենք, որ այդ այցելուները այն մարդիկն են, որ Դաշնակցութեան բառարանում նշանակված են «աշխատաւոր մասսայի դիտակցող և բողոքող տարրը» տերմինոլոգիայով։

Եթէ այս են հասկանում այդ մարդիկը՝ ասելով թէ մենք կերպարանափոխեցինք հայկական կեանքը—բոլորովին ուղիղ է։

Պակասը եկաւ լրացրեցին այս տարվայ էջմիածնի կենդրոնական ժողովի ընտրութիւնները, որոնք բոլորովին յեղաշրջեցին ընտրութեան գաղափարը և ազիտացիան։ Այդ ընտրութիւններով Դաշնակցութիւնը ժողովրդի մէջ պատուասոտեց բանութիւն, թշնամական վերաբերմունք դէպի ինտելիգենտներն ու ուսուցիչները, սերմանեց ժողովրդեան մէջ զամբալ և կռիւ (իմա դասակարգային կռիւ) և որ գլխաւորն է՝ մեղրեց ժողովրդեան մէջ հաւատը դէպի առնասարակ հասարակական գործը։

Այնպէս որ հասարակական գործիչը կը շուարի թէ ինչպէս սկսել գործ ժողովրդի հետ և մի քանի փորձից յետոյ գալիս է այն եզրակացութեան, որ հիմա մեր ժողովրդի մէջ մտնող մարդկանց, որոնք ուզում են ծառայել նրան, հարկաւոր է Մովսէս Մարգարէի կախարդական գաւազանը, որ կարողանա մի քան անել, թէ չէ իզուր է աւելորդ է մտնել ժողովրդի մէջ։

Ասացէք խնդրեմ, այսպիսի փչացած մթնոլորտում ինչ բարոյական և մտաւոր սնունդ պիտի ստանայ մեր մատաղ սերունդը։ Կարծիք ենք մտաել միջավայրի ազդեցութիւնը մարդկային բնութեան կազմակերպութեան վրա։

Նոնիւս

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

(Շեկսպիրի «Անսանձի սանձահարումը» թարգ. Մանուչարի)

Հինգշաբթի, հոկտեմբերի 14-ին, հայ դրամատիկական խումբը Թիֆլիսի արտիստական թատրոնում ներկայացրեց Շեկսպիրի «Անսանձի սանձահարումը» կոմեդիան, 5 գործողութեամբ և 8 պատկերով։

Պիէսը խաղացվեց մեծ աշխուժութեամբ և կենդանի կերպով. գլխաւոր դերերը բաժանված էին համապատասխան կերպով։

Տիկին Սիրանոյշ կատարում էր Կատարինէի դերը։ Նրան աջողվեց ներկայացնել այն հակապատկերը, որ տալիս է Նախկին կատաղի, խրոխտ, անսանձ Կատարինէն, վերափոխելով մի հնազանդ, մեղմացած և ընկճված անձնաւորութեան տիպի։ Սիրանոյշի խաղը ընդհանրապէս կատարեալ էր, բայց բառերը բարկութեան րոպէներում սղմվում էին և լաւ չէին լսվում։

Արէլեան Պետրուչիոի դերում վերցրել էր սկզբից հշգրիտ տօն և նրան հարգատաւորութեամբ պահպանեց մինչև վերջ։ Նրա խաղի մէջ նկատվում էր ուսումնասիրութիւն և վրատատութիւն։ Տիկին Սրբուհի Մանուկեան Բիանկան էր գեղեցիկ, բայց բառերը բարկութեան րոպէներում սղմվում էին և լաւ չէին լսվում։

Մանուկեան Գրէմիոի դերում գրաւեց հանդիսականների ուշադրութիւնը։ Նա աշխատել էր ստեղծել մի տիպ, որը կենդանի գծեր շատ ունէր իր մէջ։ Մանուկեան ապրում է բեմի վրա, ոչ միայն այն ժամանակ, երբ նա խօսում է և խաղում, այլ և երբ ուրիշներն են խաղում։

Զարիֆեանի դերը այս անգամ խոշորներից չէր և չունէր առանձին ուժեղ տեղեր։ Լուսէնցիսի դերը նա կատարեց գոհացուցիչ կերպով։

Աբաքսեան Գրումիոյի դերում այն դերերից մէկի մէջն էր, որոնք աջողվում են դերասանին։ Այդտեղ աւելորդ «շարժը», որին անձնատուր է Աբաքսեան, չէ վնասում դերին։

Տիկին Մելիքեանը իր փոքր դերում բաւարար էր։

Յարութիւնեան, Թաշճեան, Ադիլխանեան, Աղաբէգեան, Նոնիկեան ամբողջացնում էին անսամբլը։

Սիրող

II

Առաջիկայ երկուշաբթի օրը, դրամատիկական խումբը պէտք է ներկայացնէ «Արտաւազդ» անունով պիեսը, որ ֆէլերիայի բնաւորութիւն է կրում և որի ներկայացման մի քանի տեսարաններում պէտք է տեղի ունենայ յատուկ երաժշտութիւն։

III

Արքունական թատրոնը որ առաջ սովորաբար դատարկ էր լինում, ներկայումս լիքն է լինում հանդիսականներով։

Ի հարկէ դիրեկտորը ամբողջապէս պարտական է այդ բանի համար տաղանդաւոր արտիստուհի Վան-Բրանդտին, որին նա հրաւիրել է մի քանի ներկայացումների համար և որը հէնց առաջին լեմ դուրս գալուց հիացմունք պատճառեց մեր հասարակութեանը։

Տ. Վան Բրանդտը մի քանի տարի առաջ լեմ է դուրս եկել Թիֆլիսում և այն ժամանակ էլ մեծ աջողութիւն ունեցաւ։ Հէնց այն ժամանակից սկսած նա եւրոպական մեծ անուն կարողացաւ ստեղծել իր համար և այժմ նա վերադարձել է այստեղ եւրոպական մեծ անունով, որին իսկապէս ասած, արժանի էլ է։

Այդ դանում կարող է հեշտութեամբ համոզվել նա, ով միայն լսել է տ. Վան Բրանդտին «Լակմէ», «Սեվ. Յեր.», «Տրավիատա» և, վերջապէս, «Ֆրա-Դիավոլո» օպերաներում։ Միշտ էլ նա ստեղծել է բեմականի կողմից տիպեր և իդեալական՝ ձայնի վերաբերմամբ։ Նրա ձայնը սքանչելի է էլ կօլորատուրը սօբրանոյի զեղեցկութեամբ, թեթև ու ազատ կերպով արտայայտած contre-fâ (Պրօխի վարիացիաներով)։

Երգչուհի Վան Բրանդտը հանդէս է գալու էլի մի քանի ներկայացումների մէջ, որից յետոյ Թոմնելու է Թիֆլիսը ու գնալու է Պետերբուրգ և ապա այնտեղից էլ արտասահման։

Ա. Օ.

ՆԱՄԱԿ ԱՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 15-ին

Թոյլ տուէք ինձ մի երկու խօսք ասել պ. Ե. Թոփչեանի կատարած պլագիատի առիթով։

Պլագիատը ակներև է, որևէ կասկած այդ մասին լինել չէ կարող։ Պլագիատոր պ. Ե. Թոփչեանը և նրան օգնելու հանդէս եկած երկու գրաշարները արդարացնում են այդ վարմունքը նրանով, որ գրաշարների գործած սխալի պատճառով, մի ամբողջ գլուխ, ուր իբր թէ յիշված է եղել աղբիւրը, չէ տպվել։ Նախ, այդ ուշացած յայտարարութիւնը շատ կասկածելի է, որովհետև, եթէ այդպիսի մի սխալ գործվեց գրաշարների յանցանքով, ինչու, երբ տպագրութիւնից յետոյ սխալը նկատվեց, պ. Թոփչեանը չը շտապեց գտնում գոյութիւն բարձրացնել «Երկիր»-ի մէջ, թէ ես պլագիատ եմ կատարել, և այնքան անբարեխիղճ գտնվեց, որ թաղրից այն հանգամանքը, թէ ես յիշել եմ «Մշակ»-ի № 107-ում կօկօշկինի անունը և բրօշիւրը, իսկ մի այլ անգամ, երբ ես մատնացոյց արի այդ հանգամանքի վրա, «Երկիր»-ը շարունակից ամենայնիւ պնդել, թէ ես պլագիատոր եմ, որովհետև կօկօշկինի անունը անցողակի եմ յիշել և մանր տառերով։ Ուրեմն, եթէ ես, որ յիշել եմ այն աղբիւրը, որից օգտվել եմ, այնուամենայնիւ մեղադրվում էի պլագիատի մէջ, որքան աւելի այդ մեղադրանքը իրան պէտք է անէ պ. Թոփչեանը, որ ամենևին ոչ մի տեղ չէ յիշել աղբիւրը։

Նոյն անբարեխղճութիւնը ցոյց տուեց «Երկիրը» և մի ուրիշ պարագայում։ «Լուժայ» ամսագրի մէջ Շեստ անունով մի պարոն ինձ մեղադրեց, որ ես իմ «Բիւրեղեր» վերնագրով 1902 թուին ես ամենասնհիրելի փաստերով ապացուցի, որ դեռ 1881, 1897 և 1900 թուականներին տպված է իմ այդ աշխատութիւնը թէ հարերէն և թէ ռուսերէն, հետևաբար, ես չէի կարող 1902 թ. գողանալ ուրիշից և վերջապէս ցոյց տուի, որ Շեստից վերցրած մասերը յատկապէս յիշել եմ աշխատութեանս մէջ, հետևաբար որևէ պլագիատի մասին խօսք լինել չէ կարող։ Սակայն «Երկիրը» անբարեխղճօրէն շարունակից ասել, թէ ես Շեստից եմ գողացել, ուշադրութիւն չը դարձնելով այդպիսի ակներև փաստերի վրա։ Եւ «Երկիրից» ոչ պակաս անբարեխղճ «Խաթաբալան», նոյնպէս մատ փաթաթան շինեց «Երկիրի» և «Լուժայի» զրպարտութիւնները, մոռանալով, որ երդիծաբանութիւնը միայն այն ժամանակ միտք ունի և կարող է հասնել նպատակին, երբ հիմնված է իրականութեան, ճշմարտութեան վրա։

Ուրեմն, ինչ է պատճառը, որ երբ ուրիշները յիշում են աղբիւրը, դուք դարձեալ պլագիատ էք անուանում, իսկ ձեզ, որ չէք յիշում աղբիւրը, արդարացնում, բերելով այնպիսի փաստեր, որոնք միայն ձեզ էին յայտնի և որոնք շատ կասկածելի են։ Այդ առաջ է գալիս նրանից, որ դուք չէք տեսնում ձեր աչքում ցոյված անպիծ գիրանը, իսկ նկատում էք ուրիշի աչքի շիւղը, որ դուք, ձեզ խստապահանջ ցոյց տալով ուրիշների վերաբերմամբ, չունէք նոյն չափով ձեզ կշռելու առաքինութիւնը։ Մի դատէք անիրաւ տեղը, որ չը դատվէք ինքներդ։

Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Սուրհանդակ» լրագրի մէջ կարդում ենք. «Հայ-հռոմէական հասարակութիւն.—Մաճառ պատուիրակութեանն անդամ Տ. Ֆրանքօ եպիսկ. ընկերակցութեամբ Դերապատ. Յովհաննէս Մ. Վ. Թուժայեանի, նախընթաց օր այցելից կ.—Պատրիարք Սապպաղեան Սրբազանին։ Տեսակցութեան միջոցին, Հունգարիա գտնուող 30—40,000-ի չափ Հայ-հռոմէականներու վրա խօսք բացուելով, Սապպաղեան Սրբազան փափաք յայտնեց, որ Եկեղեցին ինքնուրոյն ձեռներն ու արարողութիւններն պահպանելու համար՝ մայրենի լեզուին և սոյն ծէսերուն ձեր ջանքը ամբողջ Դպրոցին հմուտ հայ-կաթոլիկ եկեղեցականներ պաշտօնի կոչուելու։ Տ. Ֆրանքօ Եպիսկ. ըսաւ թէ Մաճառ կառավարութիւնն արդէն շատ թոյլատու ընթացք մը կը բռնէ այս կարգի խնդրոց մէջ, և հետևապէս կ.—Պատրիարք Սրբազանին բաղձանքը պիտի կրնայ սիրով ընդունուիլ, և խոստացաւ իր վերադարձին այս խնդրով զբաղիլ Տեսակցութիւնը շատ սիրալիր եղաւ։—Լեմպերկի Հայ կաթոլիկ արքեպիսկոպոս Տ. Թէոդորովիչ իր անձնական կարգ մը գործերուն համար Հռոմ գայեր է ու այս առթիւ տեսակցեր է Թօրպահեան վարդապետին հետ, որ Հունգարիոյ հայ-կաթոլիկներու այցելու հովիւ է նշանակված։

—

Առաջիկայ հինգշաբթի օր, դեկտեմբերի 22-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում հայ դերասանական խումբը ներկայացնելու է ի նպաստ Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան Իրսէնի «Թօքգոր Շեօկման» պիէսը։ Ի նկատի ունենալով բարեգործական ընկերութեան անդին կարիքները, յոյս ունինք, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը չի զլանայ օգնել անդրանիկ հայ Բարեգործական ընկերութեան և վաղօրօք կը գնէ տոմակներ այդ ներկայացման համար։

—

Թիֆլիսի քաղաքային սպանդանոցի ադմինիստրացիան ներկայացրել է քաղաքային վարչութեանը այնտեղ ծառայողների մի հաւաքական պահանջ, ապ նրանցից իւրաքանչիւրին առաջիկայ տօների առթիւ իւրաքանչիւրի ռոճիկի քանակը իբրև նուէր։

—

Թիֆլիսի սանիտարական-բժշկական տեսուչը զեկուցել է քաղաքային վարչութեանը, որ քոլերէյով հիւանդներ եղել են օգոստոսին 76 հոգի, սեպտեմբերին—108, հոկտեմբերին—304, նոյեմբերին—348 և դեկտեմբերին (12 օրվայ մէջ) 143 հոգի, որոնցից 90%-ը երեխաներ են։

—

Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի հասարակական գրադարանի շինութեան մէջ նշանակված է Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերութեան Կովկասի բաժանմունքի նիստը։

—

Դեկտեմբերի 14-ին, երեկոյեան ժամը 10-ին 9-րդ քաղաքամասում անյայտ չարագործներ Անտոնովկի փողոցում սպանել են Սակով Փիրալովին։ Մարդասպանը բէրութով է խփել ձախ կողքին և մէջքին և կարողացել է անյայտանալ։ Մեռնող Փիրալովի բարձրացրած աղմուկից հաւաքվել է ժողովուրդը, հասել են Շան զինուորները, որոնք ձերբակալել են հաւաքված ժողովրդից մէկին—Կոնստանտին Կօրելչվիլին, որը ծառայում է Սողոմոնեանների գործարանում։

—

Թիֆլիսի հացթուխների աւագը դիմել է քաղաքային խորհրդին, որ դարձեալ հարց բարձրացնվի հացի սակագնի մասին, և այդ հարցը քննվի բոլոր հացթուխների ներկայութեամբ։

—

Երէքարքարշի ադմինիստրացիան երեկվանից արդէն սկսել է դիմ անցկացնել Սօլոլակում։

—

Վելեամինօվսկի փողոցում Մաշադիբէկովի տանը ուսմ պայթելու գործի համար բանտարկված դեղագործներ Լիսովինին, Զիլվանձէին և Զուտուլաշվիլիին արձակել են բանից։

—

Դեկտեմբերի 15-ին գպրոցական մանուժողովի նիստին նկատի առնելով սանիտարական-բժշկական տեսչի զեկուցումը Թիֆլիսում տարածված քոլերէյ հիւանդութեան մասին, որոշված է այսօրվանից արձակել քաղաքային տարբերան դպրոցների աշակերտներին և պրոֆիսիոնալների արհեստանոցի ցածր դասարանների աշակերտուհիներին։ Նոյն սանիտարական տեսչի առաջարկութեան համաձայն, արգելելու աշակերտների մասսայական համախմբումը, որոշված է ծնողներն ու տներին տնտնատուր և նման ուրախութիւն չը սարքել և յետաձգել մինչև զատկական տօները։

—

VI քաղաքամասի վաճառականները և արհեստաւորները, որոնց խանութները և առևտրական հիմարկութիւնները գեն. Նահանգապետի կարգադրութեամբ փակվել են գեն. Գօլոշչաբովի կեանքի դէմ մահափորձի պատճառով, դեմել են մօտ օրերս Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարին՝ խնդրելով մէջտեղ գեն. Նահանգապետի առաջ, որպէսզի թոյլ տայ բանալ յիշեալ առևտրական հիմարկութիւնները։ Իշխ. Զերքեզովի խնդիրքը յարգված է և գեն.-Նահանգապետի հրամանով յանձնարարված է 6-րդ քաղաքամասի պրիստաւին՝ բանալ խնդիրքում յիշված անձների խանութները և առևտրական հիմարկութիւնները։

—

Մինգրելիայում եռանդուն կերպով պատրաստվում են առաջիկայ ընտրութիւնների համար։ Գիւղերում արթնութիւն է նկատվում, որը ցոյց է տալիս գիւղացիների հետաքրքրութիւնը դէպի քաղաքական կեանքը։ Գիւղացիները յանախ ժողովվում են կամ գիւղական վարչութեան մէջ, կամ եկեղեցու զաւթումը և քննում են թէ, որոնց անցկացնել իբրև լիազօրներ և ընտրողներ, որի ժամանակ միշտ կողմակից են հանդիսանում ծայրայեղ ձախակողմեանների։

(«Знаніе»)

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Ալէքսանդրապոլցի Կոստանդին Մինասեան Սահակեանց, արհեստով կօշկակար, հասակը 40 տարեկան, նոյեմբերի 20-ին գնացել է մեծ Դաղաքելիսա իր գործով և մինչև օրս չի վերադարձել. խնդրում ենք ծանօթներից ով ինչ տեղեկութիւն ունի յայտնեն Կարս, Սահակ Սահակեանին»։

—

Պ. Աղայեվը շարունակում է հաշիւ տալ իր շրջագայութեան մասին Դաղստանում և Հիւսիսային Կովկասում։ «Իրշադ»-ին, Թաղիեվին ու բժիշկ Կարաբէկովին ուղարկել է հեռաձայնագրեր։ «Դանձակի նահանգի ազատատարներին նպաստելու մասին գործ դրած ձեր ջանքը ամբողջ Դաղստանի ժողովրդին լեցնում է ուրախութեամբ և հրճուանքով։ Նոյն նպատակով այստեղ ես կազմվեց Նպաստամատոյցի երկու ժանեակներ, միւսը արաբական, միւսը իգական անդամներից բաղկացած։ Արական մասնաճիւղի անդամներն են գնդապետ Խաչատրաշով, գնդապետ Միքայէլ բէգ Խալիլով, գեներալ-նահանգապետի դիւանապետ վարիչ Փիր Ալի Ամիրով, վիճակային երկրաչափ Ագիլ-Կերեյ Դաղբէգով և Նուհ բէգ Թարգովսկի։ Իգական մասնաճիւղի անդամներ՝ Ֆաթմա խանում Կազանալիպով, Դաղբէգովա, Ամիրովա, Դալիպովա և այլն։ Զեզանից և ձեր տիկնոջից խնդրում եմ, որ գոհունակութիւն յայտնէք Խաչատրաշովին, Ամիրովին, Դալիպովային և Կազանալիպովային։ Մինչդոյն ժամանակ խնդրում եմ, որ մշակված կանոնադրութիւնից, և ստացված թոյլատրութիւնից մի մի օրինակ ուղարկէք այստեղ, ես գնում եմ Դերբենդ։ Ահմէդ բէգ Աղայեվ»։ Դարձեալ ուղարկել է հետևեալ հեռագիրը. «Կազմվեցին երկու մասնաճիւղեր մին՝ Պետրովսկում և միւսը Դաշլաղարում։ Խնդրում եմ, որ կանոնադրութեան և կառավարական թոյլատրութեան օրինակներից ուղարկէք երկու մասնաճիւղերի՝ նախագահներ՝ Միր-Մօսէին Սայիդովին և մաշադ Բիրամ Կուլի Հիւսէյնովին, հանդերձ շնորհակալութեամբ։ Այսօր Պետրովսկում մի քանի խանումներ հաւաքվելով կազմեցին մի կանանց մասնաժողով։ Ահմէդ բէգ Աղայեվ»։

—

Տպարանական, վիմագրական և կազմարարութեան ընկերութեան բանւորները Բաքում դիմել են նաթարդիւնաբերողների 23-դ համագումարին, առաջարկելով մի անհրաժեշտ գումար յատկացնել բանւորական գրադարան կազմելու և նրա գոյութ

կան ջարդեր անելու համար, հիմնվելով պատմական վկայութիւնների վրա՝ «Աստուած առաջին անգամ սրբագործել է հալածանքները հրէական ազգի դէմ» Եգիպտոսում։ Ծանօթանալով այդ բրօշիւրների բովանդակութեան հետ, քահանայ Պօկրովսկին անմիջապէս գնում է քաղաքապետի մօտ և յայտնում, որ ոչ քաղաքացիական պարտականութիւնը, ոչ հովուական արժանապատուութիւնը թոյլ չեն տալիս իրան օգտվել այդ բրօշիւրներից բաժանելու նրանց կալանաւորներին ընթերցանութեան համար։ Պօկրովսկին առաջարկել է քաղաքապետին ռուս ժողովրդի դաշնակցութեան այդ բրօշիւրները ուղարկել իր անունից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

—

Պարիզ դեկտեմբերի 4-ին

Հաղիւ թէ կարելի լինի վիճել այն ճշմարտութեան դէմ, որ ազգերի միմեանց հետ համերաշխ ապրելու անհրաժեշտ պայմաններից մէկն է՝ միմեանց մօտիկ ճանաչելը, միմեանց կեանքի, լեզուի ու գրականութեան ուսումնասիրելը։

Եթէ դարերով իրար կողքին և իրար հետ խառն ապրող Կովկասեան բազմաձան ազգութիւնները ճանաչէին փոխադարձաբար միմեանց կեանքը, լեզուն և գրականութիւնը, անպայման տեղի չէր ունենայ,—կամ եթէ ունենար՝ շատ թոյլ կերպով,—այն դատապարտելի փոխադարձ կասկածոտ և թերահաւատ վերաբերմունքը, որը միշտ նկատվում է նրանց մէջ։ Համարձակ կարելի է ասել, որ Կովկասեան վերջին երկու տարվայ հայ-թուրքական կորստաբեր ու ամօթալի կոտորածների զգալի պատճառներից մէկն է նաև այն հանգամանքը, որ այդ երկու դարաւոր հարևանները ծանօթ չեն իրար կեանքի հետ։

Ցիրաւի, վերցնէնք, օրինակի համար, Կովկասի երեք գլխաւոր ազգութիւններ, հայ, թուրք և վրացի. միթէ մատներով չի կարելի հաշուել գրանցից ամեն մէկի մէջ այն անձանց թիւը, որոնք հիմապէս ծանօթ լինեն միւս ազգութեան կեանքի, լեզուի ու գրականութեան հետ։ Ճշմարտութիւնը թեպետում է խոստովանել, որ եթէ մի որևէ բան արված է այդ ուղղութեամբ, այդ արել ենք մենք, հայերս թէև մասամբ միայն և այն էլ անգիտակցաբար. բայց դժբաղդաբար այդ էլ չի կարելի ասել մեր հարևանների վերաբերեալ ու մինչև այժմ մենք մնում ենք նրանց համար «terra incognitus»։

Բայց հիմա, երբ սոցիալական գաղափարները ալեկոծված ծովի հսկայ ալիքների նման դուրս են գալիս իրանց նեղ ափերից և արագութեամբ ողողում ժողովրդի լայն խաւերը, երբ սոցիալական գրոշակի վրա կարմիր տառերով գրված է, իբրև նշանաբան—դասակագային (և ոչ ազգային) կռիւը» և վերջապէս, երբ հայ-թուրքական կոտորածների պատճառած վէրքերից դեռ հոսում է տաք արիւնը և լսվում է անթիւ որբերի լացն ու կոծը, հիմա, կրկնում ենք, ժամանակ է հասկանալու, որ ոչ մի ջանք ու միջոց չը պէտք է խնայել ուսումնասիրելու և մօտիկ ծանօթանալու միմեանց լեզուի, գրականութեան և աշխարհայեցողութեան հետ։

Ահա այս տեսակէտից չի կարելի ուրախութեամբ չողջունել լրագրութեան միջոցով մեզ հասած, ու գուցէ շատերի համար շատ անսովոր փոքրիկ լուրը, որը հաղորդում է՝ որ Ներսիսեան դպրոցում այս ուսումնական տարվայ սկզբից մոցրված են վրացերէն լեզուի դասեր։

Կարելի է յուսալ, որ այդ օրինակը միակ չի մնայ մեր կեանքի մէջ ու բացի դրանից առաջ կը բերէ նոյնանման փոխադարձ վերաբերմունք մեր դրացիների մէջ։

Ճիշտ միևնոյն համերաշխութեան գաղափարից դրդված, մի խումբ երիտասարդներ, երկու տարի առաջ հիմնեցին այստեղ «Կովկասեան անունով մի ընկերութիւն»։ Պարիզի կովկասեան գաղութը ապրում էր միշտ առանձնացած, անհատական կեանքով, իսկ եթէ երբեմն խմբվում էր նա մասամաս, զրկիչ պատճառ լինում էր միշտ նեղ, ազգային շրջը։ Նոր ընկերութեան գլխաւոր նպատակն է՝ միացնել բոլոր կովկասցիներին, առանց ազգի և համոզմունքի խտրութեան, նիւթական և բարոյական օգնութիւն ցոյց տալու համար միմեանց։

Մինչև հիմա ընկերութիւնը միջոցների սղութեան պատճառով, սահմանափակվում էր միայն նիւթական նպաստներ տալով իր անդամներին, իսկ այժմ, շնորհիւ մի խումբ համակրողների նիւթական օժանդակութեան նա սկսում է լայնացնել իր գործունէութեան ասպարէզը։

Նոյեմբերի 30-ին ընկերութիւնը բացեց այստեղ իր գրադարան-ընթերցարանը, որը դեռևս հարուստ չէ գրքերով և ստանում է միայն մի քանի կովկասեան լրագիրներ, բայց յունվարից ձեռք կը բերվեն գրքերը մասամաս և կը ստացվեն Կովկասի բոլոր պարբերական հրատարակութիւնները առանց խտրութեան և մայրաքաղաքների ռուսական թերթերից մի քանիսը։

Գրադ.-ընթերցարանին կից կազմակերպված է բիւրո՝ ընկերութեան անդամներին և առհասարակ բոլոր հայրենակիցներին Պարիզի կեանքի վերաբերեալ անհրաժեշտ տեղեկութիւններ մատակարարելու համար։

Բացի դրանից՝ Կովկասի հետ մշտական կապ պահպանելու և նրա հասարակական կեանքի հետ ծանօթանալու նպատակով ամիսը մի անգամ կը կարդացվեն դասախօսութիւններ և բեֆերատներ համապատասխան նիւթերի և հարցերի վերաբերեալ. իսկ ընկերութեան անդամներիս իրար հետ մօտիկ ծանօթանալու և սերտ յարաբերութիւն հաստատելու նպատակով կը կազմակերպվեն՝ երգեցողութիւն, արտասանութիւն (դեկլամացիա), խաղացի խաղեր և այլն—նոյնպէս ամիսը մէկ անգամ։

Ցուսով ենք, որ թէ ընկերութեան Պարիզի անդամները և թէ առհասարակ բոլոր հայրենակիցները չեն խնայի իրանց աջակցութիւնը, որպէս զի ընկերութիւնը միջոց ունենայ այդ գաղափարը իրագործելու իր համեստ և տգեղ նպատակը։

Զ. Մամուլեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիան Թիւրքիայի սրտում մխվելուց յետոյ, այժմ էլ լուրջ ջանքեր է անում իր ազդեցութեան ենթարկելու Պարսկաստանը։ Նա սպառնում է և՛ Անգլիայի և Ռուսաստանի շահերին։ Թէհրանից Պետերբուրգ հասած հեռագրատուփերը հաղորդում են, որ Համբուրգ-Ամերիկա գերմանական շոգենաւային ընկերութիւնն սկսել է գործադրել Պարսկական Ծոցի նաւահանգիստները շոգենաւային երթևեկ հաստատելու ծրագիրը։ Առաջին շոգենաւը կանգնեց Բասրայում, 1500 ոտն տարողութեամբ, այցելել է Բասրա, Մուհամմարա, Բէնդէր-Աբբաս, Լինջէ և Բաղդադ։ Նա 9,000 հակ բեռ վերցրեց և Բասրայից ճանապարհ ընկաւ ամբողջովին բեռնաւորված։ Վերոյիշեալ տեղերը տարաւ մեծ քանակութեամբ գերմանական, աւստրիական և եգիպտական ապրանքներ, շաքար, լուցկի և զանազան գործված կտորներ։ Զորս շրջեցաւ են յատկացրված յիշեալ գծի համար։ Եւ բեռների փոխադրութեան արժէքը մի երրորդ տոկոսով աւելի էժան է քան անգլիական շոգենաւներինը։

Այս լուրը մեծապէս քաջալերել է գերմանական ընկերութիւններին, որոնք յոյս ունեն թէ պիտի կարողանան անգլիական և ռուսական շոգենաւերից խլել Պարսից Ծոցի նաւագնացութիւնն ու վաճառականութիւնը։ Բուշիրի գերմանական հիւպատոսը ինքն անձամբ բաց է արել Պարսկական Ծոցի գերմանական ընկերութիւնների մասնաճիւղերը։

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական կայսրութեան ազգաբնակութիւնն աճում է հսկայական համեմատութիւններով։ Բերլինի պաշտօնական թերթը հրատարակում է վիճակագրական արդիւնքը վերջին մարդահամարի, որից երևում է, որ մինչդեռ Գերմանիայի բնակիչների թիւը 1900 թ. 56,367,178 հոգի էր, 1905 դեկտ. 1-ին բարձրացել է 60,641,278 հոգու։ Հետևաբար վերջին հնգամեայ շրջանում գերմանական ազգաբնակութիւնն աճել է 7.6% համեմատութեամբ։ Գերմանական կայսրութիւնը կազմող պետութիւնների գլուխն է կազմում Պրուսիան իր 37,293,324 բնակչով։ Նրանից յետոյ գալիս է Բաւիերան 6,525,372 բնակչով։ Գերմանիայի ամենափոքր իշխանապետութիւնն է Շաումբերգ Լիպպէի պետութիւնը, որ ունի միայն 44,000 բնակչութիւն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 դեկտեմբերի

ՏՕԿԻՕ, 3 դեկտեմբերի։ Պաշտօնական տեղեկութիւնը մատնանշում է, որ անհիմն են Պետերբուրգում տարածված լուրերը, ռուս-եապօնական նանակցութիւնների խզման մասին։ Եապօնիան երբէք Ռուսաստանին չափազանցած պահանջներ չէ առաջարկել և բանակցութիւնների ժամանակ իրան էլ անհաշտ չէ ցոյցել։ Երկու պետութիւններն էլ պէտք է ուշադրութեան առնեն պատերազմից յետոյ ստեղծված իրերի նոր դրութիւնը։ Սակայն վճռապէս ոչինչ այնպիսի բան չէ պատահել, որը առիթ տար բանակցութիւնների խզման։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 դեկտեմբերի։ Դեկտեմբերի 13-ի երեկոյեան ժամը 8-ին, ոստիկանութիւնը շրջապատել է տեխնիքական շինութիւնը, ուր ժողով է եղել գումարված, և ձերբակալել է մօտ 600 հոգու, որոնց մեծ մասը բանւորներ են։ կան նաև շատ կանայք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 դեկտեմբերի։ Զին կառավարութիւնը տեղեկացրել է Պէկինում գտնվող օտարազգի ներկայացուցիչներին, որ դեկտեմբերի 19-ից Գուանտի գաւառի Պէնսան քաղաքը բացվել է օտարազգի առևտրի համար։—Բանւորական դաշնակցութիւնը դիմել է բանւորներին մի կոչով, որ ի նկատի առնելով կուսակցական հոգի վրա կատարվող սպանութիւնները, վճռված է մի խորհրդակցութիւն կազմել թիւրիմացութիւններին վերջ դնելու և թշնամի կողմերին հաշտեցնելու համար։ Սակայն սպանութիւնները չեն դադարում։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 14 դեկտեմբերի։ Երեկոյեան ժամը 7-ին 5 զինված անձինք ափաշկարաց, հասարակութեան աչքի առաջ գողացան նոր թատրոնի գանձարկղից 1000 ռուբլի և անյայտացան։

15 դեկտեմբերի

ԼՕՆԴՕՆ, 14 դեկտեմբերի։ Դեկտեմբերի 25-ին (նոր տ.) Կալկուտայում բացվել է ազգային կօնգրէսը, ուր տրամադրութիւնը հաստատական է եղել։ Նախագահ Դադաբիա Նաորոջին մի ճառ է արտասանել, որով յենվելով կէմբրիջի Բաններմանի խօսքերի վրա՝ թէ ամենալաւ կառավարութիւնը անգամ չէ կարող փոխարինել ժողովրդական ինքնավարութեան, պնդել է, որ հնդիկներին, որպէս քրիստոնական հրպատակների, պէտք է ինքնավարութիւն տրվի, որպիսին շնորհված է վերջերս Անգլիայի թշնամի բուերին։ «Իրանք, անգլիացիները, ասել է Նաորոջին, ոչ մի օր չէին համբերի կառավարութեան այն հիւանդոտ սիստեմին, որպիսին գործադրվում է ներկայումս Հնդկաստանում։ Հնդկաստանի պետական բոլոր հիմնարկութիւնների բոլոր տեսդերը պէտք է բաց լինեն մեզ համար։ Ժողովուրդը պէտք է իրաւունք ստանայ հսկել պետական նախահաշուի վրա։ Անկարելի է միանգամից բարենորոգումներ մտցնել, բայց հարկաւոր է ժողովուրդը աստիճանաբար զարգացնել և այդ ուղղութեամբ մասնակի դարձնել պետական կեանքը, տարածել ձրի, պարտադիր ուսում։ Այժմ, երբ Զինաստանը և Պարսկաստանը թօթափում են իրանց թմրութիւնը, իսկ Ռուսաստանը և Եապօնիան արդէն զարթնել են, հնդիկները, որոնք խաղաղութեան առաջին քաղաքակիրթներն են եղել, չեն կարող տեսպօտիզմի տիրապետութեան ներքոյ մնալ։ Պէտք է կօնդրէսի անունից թագաւորին, համայնքների պալատին և լօրդերին մի պէտիցիա ներկայացնել իրաւունքների վերաբերեալ։ Հարուստ հնդիկները պէտք է ազատասէրների ընկերութիւն կազմեն՝ քաղաքների և գիւղերի ազգաբնակութեան մէջ, հնդիկների՝ որպէս քրիստոնեական պետակների ներկայ իրաւունքների մասին տեղեկութիւններ տարածելու համար»։ Անգլիական տեղական մամուլը Նաորոջիի այս ճառի առիթով վերին աստիճանի անբարակամութիւն է յայտնում։

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, 14 դեկտեմբերի։ Պետական Դումայի նախկին անդամ Միխայլովի անունը հանված է ընտրողների ցուցակից։

ԼՕՆԴՕՆ, 14 դեկտեմբերի։ «Թայմսի» զինուորական թղթակիցը քննելով այն հարցը, թէ արդեօք, Ռուսաստանը 5 տարուց յետոյ զինուորական տեսակէտից մի թոյլ երկիր կը դառնայ, թէ ոչ, այն եզրակացութեանն է գալիս, որ Ռուսաստանը ներկայումս պատերազմի համար աւելի լաւ է պատրաստված, քան թէ առաջ։ Հեղինակը իր եզրակացութիւնը հիմնում է Հեռաւոր Արևելքի և մէջին Ասիայի զօրքերի քանակի և Սիբիրի երկաթուղու կառուցման համար նոր դումարներ յատկացնելու վրա։ Ծառայութեան ժամանակամիջոցի կրճատումը, ռոճիկ աւելացնելը և կերակրելը լաւացնելը աջող են ազդել զօրքի դրութեան վրա։ Թէև Ռուսաստանը կորստներ ունեցաւ, բայց նրա կենսալի ոյժերը դեռ ամբողջ են և կայուն։ Ռուսաստանը առաջվայ նման դարձեալ քաղաքական մի լուրջ ֆակտոր է և երբ նրա ներքին կեանքում հանգըստութիւն և անդորրութիւն տիրէ, այն ժամանակ նրան վիճակված է զինուորական մի ուժեղ մեծ պետութիւն դառնալ, և Եւրոպայի միջազգային կշռքում ուժեղացնել իր նշանակութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 դեկտեմբերի։ Երեկոյեան ժամը 9-ին, բացվեց բանւորական հարցի ուսումնասիրութեան մինիստր Միլիսօսիանի նախագահութեամբ մի խորհրդակցութիւն, որը պարզեց բանւորական օրէնսդրութեան պատմութիւնը, կեանքի մղած և դատի բարձրութիւնից ընդունված և ազդարարած մի շարք կարիքների լուծման անհրաժեշտութիւնը, բանւորների կենցաղի և դրութեան բարելաւման համար։ Խորհրդակցութիւնը պէտք է թէքսիների և նախագծերի մի ժողովածու կազմէ և մասնաւոր հիմնական կէտերը՝ ապագայ օրէնքների համար։ Այս բոլորը փութագնութեամբ պէտք է քննվեն և մշակվեն Ծնունդից յետոյ և առաջին իսկ հերթին մտցնվեն Պետական Դուման։ Խորհրդակցութիւնը օգտակար գտաւ, խուսափելով ընդհանուր քննադատութիւնների ձգձգվող վճռից, անցնել նախագծերի քննութեան և քննել բանւորներին՝ հիւանդութեան դէպքում պետական հաշուով ապահովագրելու տարիով կազմած նախագիծը, ինչպէս և ցանկալի ընդունվեց այդ ապահովագրութիւնը տարածել նաև վարձու աշխատանքի բոլոր տեսակների վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 դեկտեմբերի։ Հասարակական գործիչների ակումբում Ս. Ս. Սոսլիպինը մի բէֆերատ կարդաց «հայրենասիրութեան», որպէս դէպի հայրենիքը տածվող խելացի սիրոյ զգացմունքի մասին, զգացմունքի, որ հիմնված է պետական բարիք ստեղծելու սկզբունքի վրա»։ Զեկուցումը կենդանի վիճաբանութիւնների նիւթ դարձաւ։

ԼՕՆԴՕՆ, 14 դեկտեմբերի։ Լիվերպուլում Սուտաց հիւպատոս Գէյմանը լինչնապանութիւն է գործել Լուրերին նայած հանգուցեալը տանջվելու է եղել մելամաղձոտութեամբ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱՔՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ՀՈՎՀԱՆԷՍ ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԻԱՆ

ՀԱՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՍԱՆԴԱՄՈՏ
ԹՕԹԿԱՊԵՏ Գ. ԳԱԼԱՍԱՐԳԵԱՆ
Հիմնված 1880
(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մերձսեռ. հ.։
Կ. Մ. ԶԻՒՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վերաբուժու իսն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿՆՈՋԻՆ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Դուբրովնով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծոցկանաց։
Վճարը 50 կ.։ Լաբորատորը ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վեկտմինսկայա փողոց № 8.
(Ե. Հ. 2.) 4—100

ԲԺԻՇԿ
Ա. Մ ի ք ի թ ա ր ե ա ն ց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Գասպարովի փողոցների,, № 33/15։
(Ա. Օ.) 73—100

ՀՐԱՒԷՐ
2-րդ և վերջին ժողով
Ս. Էջմիածնի սինոդի հրամանով Ս. Սարգսի վանքը՝ ընդ անմիջական տեսչութեամբ թեմական տէր առաջնորդի, յանձնվում է ծախերից ընտրված և կօնսիստորիայից հաստատված նորաբաց ուսումնարանի հոգաբարձուներին. ուստի դեկտեմբերի 17-ին կիրակի առաւօտեան 11 ժամին նոյն եկեղեցումը լինելու է երկրորդ եւ վերջին ժողով՝ ընտրելու երէցփոխ, և այս առիթով հրաւիրում եմ 22 տարին լրացած երկսեռ բոլոր ծխերին, շտապեն ներկայ լինել յիշեալ եկեղեցումն ընտրութեանը ժամակցելու։
Գործակալ Գրիգոր աւագ քահ. Մանդակունի
(Հ. ու. 2.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Կիրակի, դեկտեմբերի 17-ին նշանակված է
ԴԻՄԱԿՍՀԱՆԴԷՍ
Ընդհանուր հիմունքներով։
2—3

Լոյս տեսաւ և վաճառվում է
„ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ“
կազմ. ՆԵՏԱՐ
Բովանդակութիւն
1) Սեռական գիտելիքների անհրաժեշտութիւնը. 2) Գիտելիքներ սեռական կեանքի մասին. 3) Սեռական գործարաններ. 4) Սեռական կեանքի գործողութիւնները. ա) Երազախարութիւն, բ) Դաշտան, գ) Սեռական յարաբերութիւն, դ) Յղութիւն, ե) Ծննդաբերութիւն. 5) Յաւելուած.—Երեխայի խնամատարութիւնը. գինն է 20 կոպէկ։ Դումարով գնողներին 30% զեղչ։ Երևանից դուրս 20% զեղչ. ճանապարհածախսը մեր հաշիւն։
Դիմել Типографія Х. Айвазянца
(2.) 3—5

ԼԱԳՕԴԵԽԻ նորաբաց դպրոցի համար հարկաւոր է ՈՒՍՈՒՑԻՉ. Պայմանների մասին դիմել «Մշակ»-ի խմբագրատուն, Լ. Դանիէլեանցին։
3—3

ԹԱՐԳՄԱՆՎԱԾ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ
լոյս կը տեսնի
Էրենաս Որնանի
ՑԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ
2—2 Գ. Վ.

Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների համար հարկաւոր է ուսուցչական
ԻՆՍՏՈՒՏՈՐ կամ ՍԵՄԻՆԱՐԻԱՆ
աւարտած ուսուց լեզուի համար
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
շաբաթական 24 դասով
դասապինը 30 ռուբլի
Ռոճիկը կը վճարվի պաշտօնը ստանձնելու օրից։ Դիմել Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութեան։
Նախագահ հոգաբարձութեանը։
Սերգեյ Ադամեանց
Քարտուղար՝ Ճղմաճեանց
(Ա. Հ. 2.) 2—5

Տօնական նուէր պատանիներին
Յարութիւն Եսայեանի
„ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ“
Պատկեր հայ-թուրքական կռիւներից
Դինն է 7 կոպէկ
Գրավաճառներին և գումարով գնողներին որոշ զեղչ։ Դիմել Թիֆլիս «Գուտենբերգ» գրավաճառանոցը։
2—5

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎ
Կիրակի, դեկտեմբերի 17-ին, պատարագից յետոյ առաւօտեան ժամը 11½-ին, Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում նշանակված է ծխական ժողով լսելու՝
Ծխական հոգաբարձութեան միամեայ հաշիւը։
և քննելու՝
1) Հոգաբարձութեան առաջարկութիւնը ս. Մարիամեան դպրոցի գոյութիւնը ապահովելու և
2) Ապագայում ծխական ժողովներ հրաւիրելու հարցը կանոնաւորելու մասին։
Սրանով Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցուն պատկանող 21 տարեկանից բարձր բոլոր ծխականները—Վեհափառ Կաթողիկոսի կօնգրեսների համաձայն—առանց սեռի և դասակարգի խտրութեան հրաւիրվում են մասնակցելու այդ ժողովին։
Ի դիմաց ծխական հոգաբարձութեան՝
Երէցփոխ Ստ. Մնացականեան
(Ու. 2. Կ.) 2—3

ՀԱՐԿԱՒՈՐ Է
Ղզլարի հայոց ծխական դպրոցների համար երաժշտական պատրաստութեամբ մի հմուտ երգեցողուհի
ՈՒՍՈՒՑԻՉ
20 դասով, որը պիտի պատրաստէ նաև եկեղեցական քառաձայն խումբ և վարէ խմբապետի պաշտօնը։ Ռոճիկը յունվարի 1-ից մինչև յունիսի 15-ը 500 ռուբլի։
Ի դիմաց հոգաբարձութեան՝
Մ. Մոլթանեան

ԳԻՄՆԱԶԻՒՑԻ
VIII դասատան աշակերտուհի,
որը 4 տարի
շարունակ պարապել է
աշակերտների հետ, ցանկանում է դասեր ունենալ մասնչի վարձատրութիւնով։
Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն. (Базарная ул.) 4—5

Առաջարկում եմ
ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ
Մ. ԳՕՐԿՈՒ
„НА ДНѢ“-Ի (ՑԱՏԱԿՈՒՄ)
Թարգմանութիւնը
շատ թեթև պայմաններով։ Գրաքննչից թոյլատրութիւն ստացված է։
Հասցէ՝ Эчмиадзинъ, Академія В. Теръ-Геворгянъ». 2—3

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ
Մատթէ Պետրոսեանի
«Շուշան», «Լիւսիա», «Հոգիպարի», «Պանակը», «Բանուորը», «Մի կտոր հացի համար», «Կապոյտ շապիկը», Արցունքներ», «Վիշտ», «Մեր պատմութիւն»։ Բոլորը մի գրքոյկում 111 երես, գինն է 30 կ.։ Արտատպված «Մուրճ»ից, «Արշալոյսից» և «Ընկերից»։
Վաճառվում է տեղական գրավաճառների մօտ և «Փարոս» պատիւհանում։ Հեղինակի հասցէն՝ Бебутовская № 42. կամ Авчалы 3. ж. д.։
(Հ. 2.) 7—10

Լոյս տեսաւ
Մ. ՀՄՇԿԵԱՆԻ
1907 Թ. ՕՐՑՈՑՑՆԵՐԸ
Ցանկացողները՝ աւելի դիմում ստանալու համար դիմում են հետևեալ հասցէով. Թիֆլիս, Թաքայիվսկի № 5, Մակար Զմշկեան։
Հ. 2. 10—15

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ“
№ 11
Հետևեալ բովանդակութեամբ
Մեր յեղափոխութիւն Տ. Զաւէն
Իշխան Սարահէդինի ծրագիրը
Եկեղեցին և պ. Շահրիարը Տ. Զ.
Զուլումի նախօրեակից Գուրդէն
Մեր օրերը (Բանաստեղծ.) Շ. Կուրղինեան
Մի նոր կուսակցութիւն
Մամուլի շուրջը
Էրզրումի շարժումներու ատաղը Ձէմիլ
Կարծիքներ (Թիւրքահայ հարցի մասին) IX Հր.—Կ.
Թղթակցութիւններ
1 Նամակ Զմիւռնիայից Զմիւռնիացի
Կուլտուրական ձեռնարկներ Թիւրքիայում
Լուրեր
Խմբագրութեան կողմից
Յայտարարութիւններ
Կիրակի, ամսոյս 17-ին. առ. ժամը 11-ին Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում նշանակված է
Հայոց Ազգագրական Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ուր ընկերութեան անդամ պ. Միքայէլ Յովհաննէսեանը կը դասախօսէ
կրօնի գաղափարի, նրա ծագման եւ էվոլիւցիայի մասին։
Մուտքը թէ ընկերութեան անդամների և թէ կողմնակի անձերի համար ձրի է։
Խորհրդի նախագահ՝
1—1 Ա. Մելիք-Ազարեան

Լոյս տեսաւ
ԿԱՌԱՊԱՆ ՀԵՆԵԷԼ
Հաւատումանի, թարգմ. Լ. Բաբայանի
ԳԻՆԸ 50 կ.
Հրատար. «Գուտենբերգ» գրախանութի։
6—8

Открыта подписка на 1907 годъ
(годъ изданія 2-й)
на ежемѣсячный сельско-хозяйственный журналъ
„ТУРКЕСТАНСКОЕ СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО“
издаваемый Туркестанскихъ Обществомъ Сельскаго Хозяйства.
Выходитъ 15 числа каждаго мѣсяца по обычной программѣ сел.-хоз. журналовъ
Къ участію въ журналѣ привлечены новые сотрудники.
Подписная цѣна съ пересылкой и доставкой: 4 рубля въ годъ, на полгода 2 руб., отдѣльный № 40 коп.
Сельскіе учителя и священники, сельскія библіотеки и школы, крестьяне и дѣйствительные члены Т. О. С. Х., обращающіеся непосредственно въ редакцію, платятъ половину
Желающимъ ознакомиться съ журналомъ пробные №№ высылаются безплатно.
Каждый годовой, подписчикъ имѣетъ право помѣстить въ теченіи года безплатно одно объявленіе размѣромъ въ 1/8 страницы.
Рукописи, присылаемыя въ редакцію должны быть написаны четко. Статьи и замѣтки, присылаемыя безъ обозначенія условій гонорара, считаются безплатными.
Цѣна объявленій цѣлая страница—12 руб., ½ страницы—6 руб., ¼ страницы—3 руб. 50 коп. и 1/8 страницы—2 руб.; передъ текстомъ плата вдвое дороже.
Подписка и объявленія принимаются въ редакціи журнала (Ташкентъ, Иканская. д. № 7) и во всѣхъ главныхъ книжныхъ магазинахъ Туркестанскаго края.
Журналъ выходитъ подъ редакціей агронома Н. Н. Александрова
1—1

Открыта подписка на 1907 годъ
На общественную литературную и политич. ежедневн. газету
„КАВКАЗСКАЯ РѢЧЬ“
Газета «Кавк. Рѣчь» выходитъ въ Тифлисѣ каждый день, кромѣ дней послѣ праздничныхъ
«Кавк. Рѣчь»—газета внѣпартійная, независимая прогрессивная.
Въ «Кавк. Рѣчи» помѣщаются иллюстраціи къ событіямъ дня, портреты обществен. и государствен. дѣятелей и Каррикатуры художника О. И. Шлинга.
подписная цѣна: Въ Тифлисѣ—1 годъ—6 руб., полгода —3 р., четверть годъ — 1 р. 75 к. | 1 м—60 к
Въ розничной продажѣ въ Тифлисѣ отд. «№ К. Рѣчи» ТРЙ КОП.
Въ другіе города: 1 годъ—7 руб., полгода—3 руб. 50 коп., четверть годъ—2 р., 1 мѣс. 75 к.
За границу: 1 годъ—10 руб., полгода 6 руб., четверть годъ—4 руб.
Подписавшіеся теперь же на весь 1907 годъ или на 6 мѣсяцевъ получаютъ газету со дня подписки до 1-го января тек. года Безплатно.
Для годовыхъ и полугодовыхъ подписчиковъ разсрочка: при подпискѣ 2 р. и послѣ каждый мѣсяцъ по 1 рублю.
Сельскія и дешевзыя библіотеки, благотворит. учрежденія, учащіеся, сельск. учителя и учительницы, рабочіе пользуются 10 проц. скидки съ подписной цѣны при непосредств. обращеніи въ главн. контору. Въ кредитъ и налож. платежомъ газета не высылается.
Подписка принимается въ главной конторѣ изданія: Тифлисъ, Кворцовая улица, домъ Грузинскаго Дворянства. ред. изд. М. Джабаръ
2—2

Ապարատներ եւ պատիճներ գնելիս ուշադրութիւն դարձրէք զոր-
թիւն դարձրէք զոր ծարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ“.
Օգտակար ընծայ առաջիկայ տօներին
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՊԱՀԵՍՏ
ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ
ԵՒ
ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ
ԱՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ
Ստացված են մեծ թիւով ամենավերջին նորութիւնների պլաստինկաներ, զանազան լեզուներով։
ԳՆԵՐԸ ԱՐԺԱՆ ԵՆ
Պատկերազարդ կատալօգները և պիեսների ցուցակները ուղարկվում և տրվում են ձրի։

„ԳՐԱՄՄՕՖՕՆ“
Ակցիօներական ընկերութեան
Թիֆլիսի բաժանմունք
Թիֆլիս, Գօլովինսկի պրոսպեկտ, տ. № 9.
Հեռագրի համար հասցէն՝ Тифлисъ "Граммокомпанія,,
(Հ. 2.) 8—25
TRADE MARK GRAMMOPHON
ԳՐԱՄՄՕՖՕՆ ԴՐՈՇՄ
Ապարատներ եւ պատիճներ գնելիս ուշադրութիւն դարձրէք զոր-
դրոշի վրա „Пишущій Амуръ“.